№ 248 ԿԻՐԱԿԻ, 2 ՆՈՅԵՄԲԵՐԻ

1914
ՔԱՌԱՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 2 ՆՈՅԵՄԲԵՐԻ № 248

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 ռուբլի. ամսական 85 կոպ.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Соломоновская ул., № 21.
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆոն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.
Տպարանի տելեֆոն № 67.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ». Соломоновская ул., № 21.
TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ՆՈՅԵՄԲԵՐԻ 1-Ի 8 ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 2 ՌՈՒԲ.

Բաժանորդագրվել կարելի է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած։

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամակագրոշմ։ ՀԻՆ ՀԱՍՑԷՆ և 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝

ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ։

Յայտարարութիւնների համար պիտի վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.։

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ՍՕՖԻԱ ԶԱՒԱՐԵԱՆԸ ընտանիքով յայտնում է, որ կիրակի, նոյեմբերի 3-ին, կատարվելու է հոգեհանգիստ Խօջիվանքի գերեզմանատանը

ԱԶԻԶ ՍԻՄԷՕՆԻ

թաղման տարելիցի առիթով և նրա ընկեր

ՆԻԿՕԼ-ԴՈՒՄԱՆԻ

թաղման քառասունքի առիթով։ Հոգեհանգիստը գերեզմանների վրա ժամը 1-ին։

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ ԼԱԶԱՐԷԹԻ ԿՈՄԻՏԷՏԸ

պատիւ ունի սրանով խնդրել պ. պ. վաճառականներին, արդիւնաբերողներին և առևտրականներին, նոյնպէս և հիմնարկութիւններին ու անհատներին, որոնք նուիրաբերութիւններ են արել Թիֆլիսի Վաճառականների Լազարէթի հիմնարկութեան և պահպանութեան համար, շնորհ բերել

ՕՐՆՈՒԹԵԱՆ ՀԱՆԴԷՍԻՆ,

որ տեղի կունենայ կիրակի, նոյեմբերի 2-ին, ցերեկվայ ժամը 2-ին (Բէբուտովսկայա փողոց № 50).

(կ.) առ. 972. 2—2

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՈՆ
Երկուշաբթի, նոյեմբերի 3-ին
ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԸՆԿ. ԽՈՒՄԲԸ
կը ներկայացնէ առաջին անգամ հայ բեմի վրա
ՔԱՕՍ
Կոմէդիա 3 արար., Ալ. Աբէլեանի
ՎԵՐՋԸ
ԳԱՆԳԷ
Դրամատիկ. լուրջ 1 արար., Մ. Մանուէլեանի
ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ.—տ. տ. Ռ. Ղանէն, Ժասմէն, Լիւսի, Ս. Սաուէտեան, Մարի, Բասմիկ, Սեւումեան, պ. պ. Ա. ԲիլէՕՆ, Ալիխանեան, Ալլահվերդեան, Արաքսեան, Աւետեան, Ռուբինեան, Խաչէն, Մամիկոնեան, Մանուէլեան, Մուրադեան, Տէր-Առաքելեան և ուրիշները։
Սկիզբը երեկոյեան ժամը ճիշդ 8-ին։
Ռէժիսէօր՝ ՍԵՒՈՒՄԵԱՆ
Վարչութեան հերթապահ անդամներ՝ Ա. Եղեկեան, Ա. Ղազարեան
առ. 975. 2—2

ԿՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԵՒ ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ
ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Ռտիշչեվսկայա 13, տելեֆոն 4—21.
Ընդունելութիւն թէ կանացի և թէ ճեռին, նոյնպէս և վիրաբուժութեան կարիք ունեցող մնայուն (стаціонаръ) հիւանդների (բացի վարակիչ և հոգեկան հիւանդութիւններից) վաղօրք գրվելու պայմանով։
Ընդունելութիւն՝ կանացի հիւանդ. ամեն օր՝ ժ. 11—12 առ.։
Հիւանդանոցի բժիշկները
Ա. Ա. Ցարութիւնեան
Ե. Ե. Վեսելովգորով
Վ. Ա. Զակրժեվսկի
Ի. Գ. Կալամկարեան
Ա. Ա. Նովիցկիյ
Գ. Ե. Տէր-Ներսէսեան
Ա. Բ. Փիշէր
Ս. Պ. Շահպարոնեանց
(Հ. կ.) առ 970. 100—1

ԲԺԻՇԿ.
Շուշանիկ Նաբարեան
(Մանուչէա կանանց հիւանդութիւնների եւ մանկաբարձութեան)։
Ընդունում է հիւանդներին՝ (առ. ժ. 12½—2. (եր. ժ. 4—6.
Հասցէն՝ Սօլոլակ, Ռտիշչեվսկայա փ. № 1. Հեռախօս 10—58.
(Ե.Հ.կ.) առ. 784. 100—29

ԲԺԻՇԿԱՊԵՏ
Մ. Յ. ՄՈՒՐԱԴԵԱՆ
Նախկին օրդինատ. Մոսկվայի համալսարանի և ասիստենտ Բերլինի համալսարանի պրոֆ. Պօղնէրի։
Ընդունում է հիւանդներին միզասեռական, սիֆիլիսի և կաշուի հիւանդութիւններով՝ առ. ժ. 10—12, երեկ. ժ. 4—6։ Սօլոլակ, Ռտիշչեվսկայա փող. սեփ. տուն, № 1, հրդեհաշէջների բնակատեղիի դիմացը, տելեֆոն 10—58.
(Չ. ու. կ.) առ. 875. 50—31

ՀԱՄԱԵՒՐՈՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

—o—

ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
1 Նոյեմբերի

ԹԻՖԼԻՍ.—Պաշտօնական։ Կովկասեան զօրաբանակի շտաբի կողմից.

Հոկտեմբերի 31-ին նշանաւոր փոխութիւններ տեղի չեն ունեցել։

Հոկտ. 30-ին Ալաշկերտի շրջանի Ղարաքիլիսայից երևան եկան մեծ թըւով քիւրդական ձիաւոր զօրքեր, որոնք դիմադրութեան հանդիպեցին մեր հեծելազնդերի կողմից։ Քիւրդերը, չը կարողանալով դիմանալ մերայինների գրոհին, յետ շպրտվեցին։

Դունայցուի ուղղութեամբ դիմադրութեան չը հանդիպեց։ Կրանսօն գրաւելիս, մենք խիստ չարդ տուինք աւստրիական առաջապահ զօրամասին։ Մանօկ և Տուրկա շրջանում, ուր մենք հոկտ. 29-ի առաւօտեան դէմ գիշերային գրոհով տիրեցինք թշնամու չափազանց ուժեղ դիրքին, աւստրիացիք յարձակման դիմեցին։ Կարպատներում, Նադվօրնայից դէպի Մարմարօշ-Սիգէր տանող ճանապարհին և Պասէչնօյի մօտ թշնամու սօկօլները պարտվեցին։

ՖՐԱՆՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ԱՆԳԼՕ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
31 հոկտեմբերի

ՊԱՐԻԶ.—Պաշտօնական հաղորդագրութիւն. «Հիւսիսում մենք մնացինք մեր բոլոր դիրքերում։ Թշնամին փորձեց Դիկսմիւդէի մօտից գիշերային յարձակումով ճեղքել մեր զօրքերի շարքերը, բայց ցիրուցան արվեց։ Մենք վերսկսեցինք Իզէրը անցած թշնամու դէմ մեր յարձակումները և ետ մղեցինք նրան ամբողջ զօրաձգում, բացի մի կէտից, ուր գերմանացիք գրաւում են գեռ 200—300 մետր տարածութիւն այդ գետի ձախ ափում։ Կենտրօնում մենք առաջացել ենք Ֆրանսիէվալ շրջանում։ Արդէն բարձունքներում գերմանացիների յամառ յարձակումները ոչ մի հետևանք չը տուին»։

ԼՕՆԴՕՆ.—Անգլիական պաշտօնական հաղորդագրութիւնը ճշդում է, որ Ֆլանդրիայում յամառ ճակատամարտը, որի մասին արդէն տեղեկութիւն տրվեց, ընթացվում է թշնամու հետևոան գնդերի մասնակի ուժեղ յարձակումներով, որոնց հետևեցին աւելի խիստ հակայարձակումներ, սակայն թշնամին կրում է աւելի մեծ կորուստ։ Դաշնակիցները շարունակ ստանում են օժանդակ օգնութիւն։ Կենտրօնում կռիւը Իպրի պաշտպանութեան համար էր։ Մեր զօրքերից մի մասը մտել էր թշնամու զօրաձգի մէջ և երեք շաբաթ շարունակ պաշտպանվում էր դաշնակից զօրքերի օգնութեամբ թշնամու ցերեկվայ ու գիշերվայ անընդհատ թնդանօթաձգութեան տակ, չը նայած որ մի կողմից էլ գերմանական հետևոան զօրամասերն էին յարձակումներ գործում նրա վրա։ Բոլոր այդ յարձակումները պարտվում էին դաշնակիցների առկուն դիմադրութեան հանդէպ։

ՊՐԷՏՕՐԻԱ.—Պաշտօնապէս հաղորդվում է, որ Բոթան հանդիպեց Դէվէտի զօրամասերին Վինբուրգից դէպի արևելք 24 մղոն հեռու և ջարդեց նրանց։ Գերվել են 250 հոգի։ Պարտութիւնը մեծ տպաւորութիւն գործեց Դէվէտի կողմնակիցների վրա։

ԱՒՍՏՐՕ-ՍԵՐԲԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

30—31 հոկտեմբերի

ՑԷՏԻՆԻԷ.—Զերնօգորական «Պրէս-Բիւրօն» հաղորդում է, որ վերջին 3 օրվայ ընթացքում աւստրիացիք խոշոր այժերով յարձակման դիմեցին Դրախովի մօտի ամբողջ զօրաճակատում, նպատակ ունենալով գրաւել կարևոր դիրքեր Կլօբուկի և Էտիմօրի մօտ։ Մեր զօրքերն հեռանալով վանեցին թըշնամու գերազանց թշնամու յարձակումը և ետ բերք օրվայ տաք կռիւներից յետոյ պահեցին բոլոր դիրքերը։

Ստացված տեղեկութիւնների համաձայն, Աւստրիան Հէրցեգովինայում կենտրօնացնում է մեծ այժեր Զերնօգորիայի սահմանի ուղղութեամբ։

Երէկ աւստրիական աէրօպլանները թռիչք կատարեցին Անտիվարի նաւահանգստի վրա և մի քանի ռումբեր նետեցին։ Մինը նետվեց զահաժառանգի ամրոցի վրա, ուր պայթումից ջարդվեցին բոլոր ապակիները։

Դրախովի մօտ տեղի ունեցած կռիւներում չերնօգորցիք կորցրին 7 սպանված և 71 վիրաւոր։ Թշնամու կորուստները դեռ պարզված չեն։

ՆԻՇ.—Վիէննայի «Կօր. Բիւրօյի» այն տեղեկութիւնը, թէ իբր սերբ օֆիցէրներն անձնատուր են լինում գերութեան ու իբր գեներալ Ստեպանովիչը անձնասպանութիւն է գործել, անհիմն է, ինչպէս և այն լուրը՝ թէ իբր Տիմօկի և Շումալի զօրաբանակները բոլորովին ոչնչացել են։

ՑԻՆԴԱՕՅԻ ԳՐԱՒՈՒՄԻՑ ՅԵՏՈՅ

(Պետ. Հեռ. Գործ.)
30 հոկտեմբերի

ՏՕԿԻՕ.—Երէկ Ցինդաոյի բերդերում ֆուգասի պայթումից սպանվեցին 1 օֆիցէր և 8 զինուոր, վիրաւորվեցին մի օֆիցէր և 56 զինուոր։

Եպօնացիք հանդիսաւորապէս ցինդաոյի կը մտնեն նոյեմբերի 3-ին։

Ցինդաօում հաստատվում է զինուորական նահանգապետ։ Միյէրվալդէկին ուղարկվում է Եպօնիա։ Գերմանական հիւպատոսին մերժվեց մեկնել Ցինդաօ՝ խաղաղ ազգաբնակութեանը ազատելու համար։ Ցինդաօում գտնվել են գերմանացիներից չը գործածված «գում-գուամ» գնդակներ։

Մինիստրների խորհուրդը որոշեց հիմնել Ցինդաօյում զինուորական վարչութիւն, նշանակել եպօնական ժանդարմերիա և ոստիկանութիւն, հաստատել պօստ-հեռագրատուն և բանալ մաքսատուն։

ԾՈՎԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
30 հոկտեմբերի

ՀԱՎՐ.—«Դիւշէս-դը-Գիդ» քարածխատարը նաւը Վաշինգտոնի մօտից 2 մղոն հեռու ջրասուզվել է։ Ազատվել է ազատել 6 հոգու. խեղդվել են 11 հոգի, ի թիւս որոց նաւապետը կնոջ հետ։

ՊԷՐՊԻՆԻԱՆ.—Ֆրանսիական մի յածանաւ բաց ծովում բռնել է մի շոգենաւ, որի վրա եղել են 150 գերմանացի և կասկածելի ապրանք։ Շոգենաւը տարված է Բանդը նաւահանգիստը։ Գերմանացիներին կուղարկեն այստեղ։

ՀԱՄԱԵՒՐՈՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԾՈՒՐՔԸ

(Պետ. Հեռ. Գործ.)
30 հոկտեմբերի

ԻՎԱՆԳՕՐՕԴ.—Նորին Կայսերական Մեծութիւն Թագաւոր Կայսրը բարեհաճեց այցելել Լիւբլին։ Կայսրանում Կայսրը բարեհաճեց ընդունել ազգաբնակութեան պատգամաւորութեան ձեռից աղ ու հաց և շնորհակալութիւն յայտնելով արտայայտված ըղձացումների համար, իր գոհունակութիւնը արտայայտեց այն առիթով, որ Լիւբլինը տոկունութեամբ կրեց պատերազմի հետ շաղկապված նեղութիւնները։ Նորին Մեծութիւնը հրէայ պատգամաւորութեանը յանձնարարեց շնորհակալութիւն յայտնել հրէայ գաղութին սիրոյ ու հպատակութեան համար։ Տաճարում մաղթանք կատարելուց յետոյ, Նորին Մեծութիւնը զինուորական մինիստրի ուղեկցութեամբ այցելեց տեղական հիւանդանոցում պառկած վիրաւոր զինուորներին, որոնց արժանացրեց ողորմած հարցուփորձի։ Հիւանդանոցից դուրս գալով, Կայսրը մտաւ կաթոլիկների աղօթատունը, և ընդունվեց կաթոլիկ հոգևորականութեան կողմից։ Ապա Կայսրը մեկնեց կայարան, ամենաողորմածաբար նուիրելով նահանգի ազգաբնակութեան օգտին 10,000 ռ.։

ԲՕՐԴՕ.—Զինուորական նաւատորմի մէջ նաւատորմները պարտաւորապէս ենթարկվում են։

ԼՕՆԴՕՆ.—Պարլամենտին ներկայացուցիչ նախահաշիւ նոր մի միլիոն զինուորի վերաբերմամբ, որի պատճառով զօրքի կազմը կը հաւասարվի ընդհանուր առմամբ երկու միլիոնի։

Համայնքների պալատ։ Շարունակվում է պատասխան-ուղերձի քննութիւնը։ Բանւորական կուսակցութեան լիդեր Դէնդէրսօնը, մի փոքր դժգոհութիւն յայտնելով այն առիթով, որ զինուորների ընտանիքներին մերժվել է նպաստներ տալ, յայտնեց, թէ նրա կուսակցութիւնը այն եզրակացութեան է եկել, թէ անհրաժեշտ է ամեն հնարաւորը անել, որպէսզի մինչև վերջը հասցվի ներկայումս երկրում տիրող զնահատելի միութիւնը։

Ասկվիթը, պատասխանելով ուղղված հարցին, ասաց, որ բրիտանական կորուստները արևմտեան ռազմաբեմում մինչև հոկտ. 17-ը հասան մօտաւորապէս 57,000 մարդու։

«Թայմսը», խօսելով ռուսական աջողութիւնների մասին, նկատում է. «Մեր ռուս դաշնակիցները աստիճանաբար աւելացնում են իրանց զէնքի պրէստիժը։ Այժմ բոլորովին պարզ է, որ, կռուելով ամենաուժեղ կերպով Աւստրիայի դէմ, ռուսական Գերագոյն Զօրահրամանատարը մտադրութիւն չունի խուսափել գլխաւոր նպատակից, որպիսին մնալու է Գերմանիան։ Ռուսաստանի արևմտեան դաշնակիցները պարտաւոր են մեծագոյն շնորհակալութիւն յայտնել այն օգնութեան համար, որ նրանք ստանում են ռուսական փայլուն յաղթութիւնների ազդեցութեան տակ, նաև այդ յաղթութիւնների գործնական հետևանքների համար»։

ԲՈՒԽԱՐԷՍՏ.—Քաղաքական աշխարհի ներկայացուցիչներից բաղկացած մի պատ-

ԹԻՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԾՈՒՐՔԸ

(Պետ. Հեռ. Գործ.)
30 հոկտեմբերի

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Պաշտօնապէս հաղորդվում է, որ Սև-ծովի վրա Սուլինայի մօտ նկատվել են թիւրքական ականանաւեր։

(Լրագիրներից)

Դարդանելի ամրակոծումների ժամանակ վիրաւորվել են 80 թիւրք օֆիցէր։

Թիւրքական պաշտօնական հաղորդագրութիւնների մէջ ամեն անգամ ասվում է. «Թիւրք քաջարի զօրքերը արշաւում են դէպի Անդրկովկաս, ռուսները փախչում են»։ Բայց և այնպէս Բ. Դրան տարամարդութիւնը ճնշված է։ Ամեն օր տեղի են ունենում խորհրդակցութիւններ, որոնք յաճախ վերջանում են մինիստրների միջև տուր ու դմփոցով։

Երիտասարդ-թիւրքերը թռուցիկներով առաջարկում են բոլգարներին պատերազմ յայտարարել Սերբիայի դէմ, երաշխաւորելով Բոլգարիային օգնութիւն ու յաղթութիւն։

Վիլհէլմ կայսրը խոստացել է Էնվէր-փաշային «Pour la Merite» շքանշանը, եթէ թիւրքերը հաստեն մինչև Թիֆլիս։

Բոլգարիայում զօրքի և նաւատորմի զօրաժողովը վերջացաւ։ Կաբինէտի գլուխ անցնելու են այնպիսի անձինք, որոնք պատերազմ են յայտարարելու Թիւրքիայի դէմ։ Բոլգարիան մտադիր է ստանալ Դոբրուջը և Մակէդոնիան։

Սոֆիա է եկել ֆրանսիական մի պատգամաւորութիւն, որ մեկնելու է յետոյ Նիշ և Բուխարեստ։ Պատգամաւորութիւնը նպատակ ունի վերականգնել բալկանեան դաշնակցութիւնը։

Կ. Պոլսում գերմանացիների դրդմամբ կալանաւորված են նորից մեծ թըւով հայեր, որոնց կամ բանտ են դնում, կամ սպանում են։

Աթէնքից հեռագրում են, որ Թիւրքիան ստացել է Գերմանիայից ոչ թէ չորս սուրջրեայ ռազմանաւ, այլ միայն մէկի մասերը։

Ռուս-թիւրքական սահմանը, ուր ներկայումս կատարվում են ռազմական գործողութիւններ, ամբողջապէս ծածկվել է ձիւնով։

Բուխարէստից հեռագրում են, որ դեմօկրատ-պահպանողականների օրգանը յոդուած է տպել այն մասին, որ Ռումինիան ոչ մի մտադրութիւն չունի միանալ Թիւրքիային։

Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախկին դիւանապետ Կորիւն նախկին վարդապետ, որ դատվեց «Դաշնակցութեան» գործի առիթով, ջերմ ցանկութիւն է յայտնել դառնալ կամաւոր զինուոր թիւրքերի դէմ կռուելու հա-

Բ. Դուռը արգելել է [illegible] սիաներին ուղարկել ծածկագիր հեռագիրներ։

ՌՈՒՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ՌՈՒՍ-ԱՒՍՏՐԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
31 հոկտեմբերի

ՊԵՏՐՕԳՐԱԴ. — Գերմանացի լէյտէնանտ Մերէզ և Պոլդէ հոկտ. 29-ին դիմեցին «Ալբատրոս» սիստեմի աէրօպլանով Կոնիսկուանս-Պլօցկ ուղղութեամբ օդային հետախուզումներ կատարելու համար, ուր նետեցին երկու ռումբ։ Բիսկինից դէպի արևմուտք նրանք ստիպված եղան իջնել գետին և շրջապատվեցին մեր դրագումներով։ Մօտիկ գտնվող թշնամու երկու վաշտ շտապեցին օգնութեան, բայց հանդիպեցին կարուկ դիմադրութեան։ Գերմանական լէյտէնանտներն և բոլորովին կանգնաւոր աէրօպլանը բերին Պլօցկ, ուր վրա նրանք առաջին օրը ռումբեր էին նետել։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Պաշտօնական։ Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից.

Արևելեան Պրուսիայում շարունակվում են կռիւները Ստալուպէնէնի շրջանում և Մազուրեան լճերի արևելեան մասում։ Սօլդաուի շրջանում կռիւը շարունակվում է նոյնպէս։

Տօրնի ուղղութեամբ գերմանացիք յարձակման ձեռնարկեցին Վիսլայի երկու ափերով դէպի Բիպին-Վլօցլավեկ ու աւելի արևմուտք։ Թշնամին այդ վայրում բերել է զօրքեր Լիկից։

Զենստօխովի շրջանում գերմանացիք աստիճանաբար կենտրօնանում են սահմանգլխի մօտ։

Գալիցիայում մեր առաջխաղացումը

ԲՈՒՍԱՆԻԿ ՆԱԽԱՀԱՇԻՒ

Ռուսական կառավարութիւնը ներկայացրել է Դումային նոր մի նախահաշիւ, որի համաձայն զինուորական նպատակներով նշանակվում է 1 միլիարդ 500 միլիոն ռուբլի։ Նախորդ տարի զինուորական նպատակներով նշանակված էր 1 միլիարդ։ Նոր նախահաշիւը ներկայացնում է 1914 թուականի ամենամեծ նախահաշիւը։ Նոր նախահաշիւի մեծ մասը գնում է զինուորների համար

գամաւորութիւն, ներկայացնելով ազգային ձգտումների իրականացման կողմակիցների նոր հայրենասիրական խմբակ, այցելեց ներքին գործերի մինիստրին և խնդրեց միջոցներ ձեռք առնել բումինական «Զիլզա» լրագրի դէմ, որ նպատակ է ստանում գերմանացիներից։ «Զիլզան» պատգամաւորութեան կարծիքով, մոլորեցնում է Տրանսիլվանիայի բումիններին, բումինների իսկական զգացմունքների նկատմամբ։ Մինիստրը միջնորդութիւնը գտաւ միանգամայն հիմնաւոր, համաձայնեց լրագրի վանգաւորը ընոյթի հետ և խոստացաւ գտնել հարցի լուծումն, որպիսին համապատասխան է բումին հասարակութեան ցանկութիւններին։

ՈՒՆԳԻԼԻ.—Բուխարէստից տեղեկացնում են, որ աւելի սատակ է զգացվում կառավարութեան և ժողովրդի միջև ձգտումների միջև տարաձայնութիւնը։ Ժողովուրդը պահանջում է անմիջապէս հանդէս գալ ընդդէմ Աւստրիայի, Տրանսիլվանիայի և Բուկովինայի բումիններին ազատելու համար աւստրիական ընտակալ լծից։ Ի պատասխանի ժողովրդի և երիտասարդութեան ցոյցերին, Բրատիանուի կաբինէտը սպառնում է պատերազմական դրութիւն յայտարարել երկրում։ Մամուլի մեծ մասը յարձակվում է կաբինէտի վրա, մատնանշելով որ Բրատիանուն ծառայութիւններ է մատուցանում Թիւրքիային և Գերմանիային, մոռացութեան տալով Բումինիայի շահերը։ Ժողովրդական «Ադէվէրուլ» լրագիրը հարց է տալիս, թէ ներկայումս է, արդեօք, Բրատիանուն անհնատես քաղաքագէտ թէ դաւաճան։ Լրագիրը գրում է, որ Զուրջէվոյի վրայով դարձեալ ռազմամթերք է ուղարկվում Թիւրքիայի համար աբատասխանից։

ՎԱՐՇԱՎ.—Բերլին վերջին կռիւներում թշնամուց խլված պատերազմական աւարը։

Վարշավա-Լօձ հեռախօսը սկսեց գործել։ Մի քանի ֆաբրիկներում ևս մասնակի աշխատանքները վերսկսվեցին։

ԵՐԵԿՈՅԵԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

(Պետ. Հեռ. Գործ.)

1 Նոյեմբերի

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—«Բեպ»-ին հեռագրում են Պարիզից, որ Դիւնկէրքէնի մօտ Լրասոյզ է եղել ֆրանսիական մի ականաւոր Օսէնդէնի մօտերքը խորակվել է գերմանական սուրբրեհայ մի նաւակ։

Նոյն թերթին հեռագրում Բուխարէստից, որ գերմանացիները երկիւղ կրելով թիւրքերի հալածանքներից, Անատոլիայից ետ են կանչել իրանց օֆիցէրներին։ Զմիւռնիայում կենտրոնացված է 70,000 զօրք։ Պարիզի և Լօնդօնի թիւրքաց դեսպանները կանգ են առել Բերլինում խորհրդակցութեանը մասնակցելու։

«День»-ին հաղորդում են Հռոմից, որ Ադրիանուպոլսում վիճաբանական շրջաններում ապատամբութիւն է ծագել։

Դիկմիւդէն վերցնելու ժամանակ, ինչպէս հաղորդում են Կոպէնհագէնից, գերմանացիները ունեցել են մօտ 100,000 մարդկային կորուստ։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետ. Հեռ. Գործ)

31 հոկտեմբերի

ԼՕՆԴՕՆ.—Նիւ-Եօրկից տեղեկացնում են, որ երկու ռուբլի պայթումից Բրօնկս քաղաքին մօտիկ փչացել է դատարանի շինութիւնը, որ արժէ մի միլիոն դոլլար, և դիմացի տները։ Բատերեոյթին չարամիտները նպատակ ունէին սպանել կամ վիրաւորել դատաւոր Լուիս Զիբսին և նրա օգնականներին, որոնք [illegible] «Սպիտակ գերիներ» վաճառողներին մերկացնելու մէջ։ Այդ գործունէութեան պատճառով խմբից 7 հոգի դատապարտվեցին երկարամեայ բանտի։ Պայթումից ոչ ոք չը վնասվեց։

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Նահանգական դատարանը դատապարտեց «Русское Знамя» լրագրի խմբագիր Պոտապոչկինին կէս տարով բանտի 1040-րդ յօդուածով՝ Օրլովի Նահանգապետ Անդրէեվսկիի հասցէին հայհոյական յօդուածներ տպելուն համար։ Ցատօվի դրամա» յօդուածի համար, որ ուղղված է երդուեալ հաւատ. Զարուզինի դէմ, Պոտապոչկինը դատապարտվեց 1040-րդ յօդուածով 6 ամսով բանտի։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

✦ Բուդապեշտի ունգարական երեսփոխանների կօնֆերէնցիայում վճռված է հարց բարձրացնել Ռուսաստանի հետ անջատ հաշտութիւն կնքելու մասին, եթէ նա համաձայնէ բաւարարութիւն տալ Ունգարիայի ազգային կարիքներին։

✦ Ականատեսների պատմելով, Վիլհելմ կայսրը ծերունու ու մռայլ տեսք ունի։

✦ Գերմանացիք Լենտատանում թողել են բազմաթիւ կեղծ 100 ռուբլանոց թղթադրամներ։

✦ Ռուսների դէմ մղված կռւում գերմանացիք կորցրել են մինչև օրս 100,000 մարդ։

✦ «Դեյլի Մէյլը» հաղորդում է, որ Հռոմի պապը պնդում է հաշտութեան կօնֆերէնցիա գումարելու վրա Վիլհելմ կայսրի խնդիրքի համաձայն, որ շատ է վախենում Իտալիայի հանդէս գալուց։

✦ Պետրոգրադի քաղաքային դումայի միջնորդութիւնը՝ ընդմիշտ արգելելու գինու և գարեջրի վաճառումը՝ յարգվել է։

✦ Գերմանական «Կարլսրուհէ» յօդածաւը ջրասուզել է հոլանդական «Մարիա» շոգենաւը, որ հացահատիկ էր տանում Անգլիայի համար։

✦ Անգլիական լրագիրների ասելով, «Էմդէնի» պատճառած վնասը անգլիական առևտրին 2 միլիոն ֆունտ է։ Ամբողջ անգլիական մամուլը մեծ գովասանքով է խօսում «Էմդէնի» նաւապետ Միւլլերի մասին։

✦ Ցայտնի ռուսատեաց Սվէն-Հէդինը սկանդինաւեան ժողովուրդներին յորդորում է հանդէս գալ ի պաշտպանութիւն Գերմանիայի։

✦ Ռուսաց զօրքերը դիմում են դէպի Կալիշ, որի գերմանացի ազգաբնակութիւնը սարսափահար փախչում է։

✦ Համառուսական զեմստվային միութեան որոշմամբ՝ Կովկասում բացվելու է միութեան ճիւղ։ Այդ նպատակով իբրև լիազօրներ ուղարկվելու են Շլիպպէն և կոմս Շերեմէտիէվ։

✦ Հոլանդական աղբիւրները հաղորդում են, որ անգլիական մօնիտորները, որոնցով ումբակոծում էին գերմանական զօրքերի աջ թևը, երևացին թէև շատ աջող, բայց և այնպէս մօնիտորները ստիպված են եղել հեռանալ, որովհետև անկարող են եղել դիմանալ գերմանական խոշոր թնդանօթների սոսկալի կրակին։

✦ Հոլանդական տեղեկութիւնների համաձայն, գերմանացիք հէնց Նեդերլանդիայի սահմանների մօտ դրել են խոշոր թնդանօթներ, որոնց բերանները ուղղված են Շելդայի մուտքերի կողմը։

✦ Ցինդաոյի մօտ տեղի ունեցած կռիւներում եապոնացիներից սպանվեցին 25 օֆիցէր և 189 զինուոր, վիրաւորվեցին 25 օֆիցէր և 853 զինուոր։

✦ Այս օրերս պաշտօնական կարգադրութիւն է սպասվում՝ ընդմիշտ արգելելու գարեջրի և այլ սղելից ըմպելիքների վաճառումը պետութեան այն շրջաններում, որոնք յայտարարված են պատերազմական [illegible]

✦ Խօսվում է ռուս-բուլգարական համաձայնութեան հնարաւորութեան մասին։

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԶԻՆԸ ԴԱՇՏԱՂՆԵՐԻ ՄԷՋ

Ֆրանսիական լրագիրները հետևեալ անհաւատալի պատմութիւնն են անում։

Գերմանական սահմանից ոչ հեռու ընկած մի աւանում, երկու տարի առաջ ինչ-որ օտարերկրացի հող ձեռք բերեց և նրա վրա գործարան կառուցեց։ Երկու ամիս յետոյ գործարանը արդէն աշխատում էր, և աշխատողները բացառապէս գերմանացիք էին։

Ցանկարծ գործարանում համաճարակ բռնկվեց։ Աւանում դագաղները պակաս երևացին և մեծ թուով դագաղներ բերել տալին արտասահմանից։ Մէկը մէւսի ետևից բոլոր գերմանացիք մեռան և թաղվեցին պատսրի ձեռքով։ Վերջ ի վերջոյ մեռաւ և ինքը գործարանատէրը, որի գործարանում աշխատանքները, այդպիսով, դադարեցին։

Եղաւ, որ ընակիչներից մէկը անձնական գործով անցաւ սահմանը։ Մեծ եղաւ նրա զարմանքը, երբ նա յանկարծ հանդիպեց գործարանի տիրոջը օֆիցէրի զգեստով։ Վերադառնալով տուն, նա յայտնեց այդ մասին իր հանգիւղացիներին, որոնց ձեռքով իշխանութիւնների թոյլտուութեամբ փոփվեցին «դագաղները». բոլորի մէջ երևացին մասուրէրի հրացաններ ու «դում-դում» գնդակներ։

Մ. Մ. ԿՕՎԱԼԵՎՍԿԻԻ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

«День» թերթը հաղորդում է, որ պրոֆ. Մ. Մ. Կովալևսկին արդէն մեկնել է Ռուսաստան Աւստրիայից, ուր նա գտնվում էր իբրև պատերազմական գերի։ Ազատութիւնը կատարվել է մեր մինիստրութեան և Վիեննայի սպանական դեսպանի եռանդուն դրագրութիւնների հետևանքով։ Սպանական դեսպանը, ինչպէս յայտնի է, պահպանում է ռուսական շահերը Աւստրիայում։ Մ. Մ. Կովալևսկիի փոխարէն մենք ազատել ենք Տաշկենտում գտնված գերմանական պրոֆեսորների գիտական արշաւախումբը, երկրաբան պրոֆ. Մախաչեկի գլխաւորութեամբ, որը զբաղվում էր Թուրքեստանի հետազօտութեամբ։ Պրոֆ. Մախաչեկը իր արշաւախմբով դուրս է եկել Տաշկենտից։

Այդ առթով «Յ. Բ.» գրում է, որ Կովալևսկիի ազատութեան լուրը չէ հաստատվում և, թերթի ասելով, Կովալևսկին դեռ ևս իբրև պատերազմական գերի շարունակում է մնալ Աւստրիայում։

Աւստրիական կառավարութիւնը պրոֆ. Կովալևսկիի գերութիւնը բացատրում է նրանով, որ Ռուսաստանում բռնված են աւստրիական հիւպատոսական մի քանի գործակալներ, որ հետևանք է եղել այն բանի, որ տեղական հանանգապետները լաւ չեն հասկացել կենտրոնական իշխանութեան կարգադրութիւնները։ Այդպիսի դէպքեր պատահել են գլխաւորապէս Սիբիրում։

Ներկայումս արտաքին գործերի մինիստրութիւնը տեղեկութիւններ է ստացել բռնված աւստրիական հիւպատոսների մասին, և վերջինները կազատվեն կարճ ժամանակի ընթացքում։

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԿՈՉԸ ՀԻԼԱՆԵՐԻՆ

Անգլիական կառավարութիւնը դիմեց Մեծ-Բրիտանիայի հրէայ ազգաբնակութեանը պաշտօնական կոչով՝ զօրքի շարքերը մտնելու մասին։ Կոչը ասում է, որ դեռ Կրիմվէլի ժամանակից հրէաները վայելում են Անգլիայում մնալու [illegible] ազատութիւն, և յորդորում է հրէաներին ծառայել իրանց հայրենիքին։ Կոչը այնուհետև հաւատ է յայտնում, թէ հրէաների մէջ դեռ չէ մարել Մակավէէների հիշատակը ազգին, և հրաւիրում է բոլոր 19—45 տարեկան հայ։—Մինչև պէս գլխի վրա ընկաւ ձիուց։

— Երբ մենք հասանք դիրքերին,—շարունակեց առաջինը,—թիւրք չէր մնացել. փոսերը լիքն էին արիւնով. թիւրքերն իրանց վիրաւորներին հաւաքել էին, տարել։ Այդտեղ էլ ինձ վիրաւորեցին...

Եւ պատմող ցոյց տուեց իր ոտի կապած վէրքը։

— Այդ օրը երեկոյեան ժամը 6-ին,—աւելացրեց ունտէր-օֆիցէրը,—լսեցինք, որ մեր զօրքերը արդէն գրաւել են Զիվինը... Մեր զօրքերը շատ ոաք են կռւում, իսկ թիւրքերը մի փոքրիկ դիմադրութիւնից յետոյ ամեն ինչ դցում են ու փախչում։

Բոլոր զինուորներն ընդհանրապէս նոյն կարծիքն էին յայտնում մեր և թիւրք զօրքի մասին։

Մի հետաքրքիր կոզակ, որ սուլնով փոքրից վիրաւորվել է Կարա-Քիլիսէի մօտ, պատմում էր, թէ ինչպէս իրանք ընդհարվեցին թիւրքերի հետ։

— Մենք առաջ էինք գնում,—ասում է նա,—մին էլ տեսանք քարերի ետևից մեր դէմ դուրս եկան թիւրք զինուորները հրացաններով։ Ի՞նչու չէ. համբեցէք կռւի։ Եւ կռւեցինք մենք՝ ինչպէս կարդն է։ Սկսեց սուլնակռիւ։ թիւրքերից շատերը հրացանները դցելով փախան... համա 3 հոգի կանգնեցին մեր դէմ ու կռւեցին մարդավարի։ դրանցից մէկը տեսաւ, որ սուլնով չէ կարողանում կռւել, հրացանը շալրանց և սկսեց քարեր գցել մեզ վրա... Քարերով կռի՞ւ, մտածեցէք... Մի խօսքով, թիւրքերը անամուրի առողջ տղամարդկանց մտնել անգլիական զօրքի շարքերը։

Ներկայումս անգլիական զօրքում կան մեծ քանակութեամբ հրէաներ։

«ԱՐԻՒՆՈՒՇՏ ԽԵԼԱԳԱՐԸ»

Ֆիլադէլֆիայում սուֆրաժիստուհիները ժողովել են 100,000 դոլլար, որ կը տրվի իբրև մրցանակ նրան, ով կը կարողանայ կատարել հետևեալ առաջարկը։

«Նրան, ով կօգնէ գերմանական կայսրին՝ «արիւնուշտ խելագարին»՝ ամբողջ աշխարհի կանայք առաջարկում են այս մրցանակը»։

Մրցանակի մասին յայտարարութիւն տալվեց ոչ միայն Ֆիլադէլֆիայի լրագիրներում, այլ և աշխարհում ամենատարածված «Նիւ-Եօրկ-Հէրալդ» թերթում։

ՀԱՍԱՆ-ԿԱԼԷ

Հասան-Կալէն գտնվում է Կարսից դէպի Երզրում տանող ճանապարհի վրա համանուն գետի (Հասան-Կալէ չայ) ձախ ափին։ Սարիղամիշից մինչև ռուս-թիւրքական սահմանը՝ Կարագուրգան 34 վերստ է, Կարագուրգանից Զիվին՝ 6 վերստ, մինչև Քեօփրիւ-Քեօյ, որը երևի շուտով կը գրաւվի ռուս զօրքերի կողմից, 90 վերստ, Քեօփրիւ-Քեօյից Հասան-Կալէ՝ 17 վերստ. ուրեմն սահմանից մինչև Հասան-Կալէ 107 վերստ։ Քաղաքը շինված է լեռնալանջի վրա և պատած է պարիսպներով։ Քաղաքի մօտ լեռնալանջի արևելեան մի ապառաժուտ մասի վրա երևում են Հասան-Կալէի բերդի հին պարիսպները։ Այդ բերդի ճանապարհը խիստ զառիվեր է և գնալ կարելի է միայն քարաժայռերի մէջ խոտորնակի անցնող շաւիղներով։ Պարիսպները քարձր են, տեղ-տեղ մինչև 15 սաժէնաչափ։ Բերդում ջուր չը կայ. ներքին բերնակարանային մասերը խախուտ են և նեղլիկ, աւելի կանգուն են պարիսպներն ու աղտարակները։ Ռազմական տեսակէտից, մանաւանդ այժմեան թնդանօթների դիմաց, Հասան-Կալէի բերդը իրանից լուրջ ամրութիւն չի ներկայացնում։

Քաղաքի փողոցները նեղլիկ, են ծուռ և անհարթ, ինչպէս Թիւրքիայի շատ գաւառական փոքրիկ քաղաքներինը։ Տները, մի կամ երկյարկանի, շինված են անտաշ քարերից և մեծ մասամբ առանց ծեփահարթի (շտուկատուրա)։ Գլխաւոր փողոցում գտնվում են կրպակները և շուկան, որոնք համարեա հայերի ձեռքումն են։ Հայերի ձեռքումն են նոյնպէս ցորենի պահեստներն ու առևտուրը։

ԷՐԶՐՈՒՄԸ ԵՒ ՆՐԱ ԱՄՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

I

Դէվէ-Բօյնու

Թիւրքաց հետ ունեցած բոլոր պատերազմների (1829 և 1877 թ. թ.) ժամանակ Երզրումը ներկայացել է միշտ էլ որպէս ռուս զօրքի առաջխաղացման վերջնական նպատակ։ Եւ դա շատ հասկանալի է։ Նախ Երզրումը Անատոլիայի մայրաքաղաքն է, նրա զինուորական և վարչական կենտրոնը, ուր չորս դար շարունակ նստել են թիւրքաց զօրաբանակների կառավարիչները իրանց շտաբով և զօրքով. դրա համար էլ Երզրումը անատոլական բանակի զօրամթերքի և զօրապաշարի կենտրոնատեղին ու պահեստատեղին է եղել հէնց այդ դիմից։

Բացի այդ՝ Երզրումը, որպէս Թիւրքաց Հայաստանի մայրաքաղաք, իր [illegible] դիրքով տիրապետել և պաշտպանել է չորս կողմից Անատոլիայի գրեթէ բոլոր նահանգները։ Եթէ դրա վրա աւելացնենք նրա ռազմական շատ աջող տեղադրութիւնը, աննման դիրքերը, տիրապետող բարձրաւանդակային նստուածքը, այն ժամանակ հասկանալի կը լինի, թէ ինչու թիւրքաց պատերազմական մինիստրութիւնը և հէնց ինքը սուլթան Համիդը Երզրումը իր դիրքերով ու բերդով համարում էին «Անատոլիայի բանալին, նրա դուռը» և պաղատում էին զօրաբանակի գլխաւոր հրամանատարներին «ոչ մի միջոց չը խնայել պահելու ու պաշտպանելու մեր պետութեան ամենակարևոր այդ կէտը, որը թշնամու ձգտումների կենտրոնն է եղել միշտ և որի՝ թշնամու ձեռքն անցնելը ամօթով կը պատի մեր բանակի և մուսուլմանութեան անունն ու պատիւը պատմութեան առաջ»*)։

Այս ունենալով աչքի առաջ՝ թիւրքաց կառավարութիւնը վերջին 50 տարիների ընթացքում ռազմատեխնիկական ամեն միջոցներով ամրացրել է Երզրումը չորս կողմից, օգտվելով նրա անման դիրքից։

Սրանց մէջ ամենից նշանաւորը, ի հարկէ, Դէվէ-Բօյնուն (Ուղտի վիզ) դիրքերն են իրանց ամրութիւններով։

Դէվէ-Բօյնուն այն բարձրաւանդակն է, ուր միանում են՝ հարաւից Փալան-Թօքանի, իսկ արևմուտքից Դարբաղ-Բազարի լեռնաշղթաները, ունենալով 6000—8015 ոտնաչափ բարձրութիւն։ Այս դիրքերը, գտնվելով Երզրումի արևելա-հարաւային կողմում, ձգվում են քաղաքից մօտ 6 վերստ լայնութեամբ և 25 վերստ ադեղնաձև երկարութեամբ, որոնց վրա շինված են 24-ից աւելի ամուր, ճակատից գրեթէ անառիկ մարտկոցներ լերկ ապառաժների վրա հաստատված։

Ի նկատի ունենալով որ Դէվէ-Բօյնուի առջև վերջանում է Արևելեան Բասէնի դաշտավայրը և այդ լեռներով սկսվում է Երզրումի բարձրաւանդակը, Դէվէ-Բօյնուի դիրքերից բացվում է պաշտպանողի առաջ արևելքից եկող թշնամու զօրքերի իւրաքանչիւր շարժում՝ բոլոր կողմերից։ Ահա թէ ինչու Դէվէ-Բօյնուին մօտենալ օրը-ցերեկով գրեթէ անհնար է, որովհետև թէ Փալան-Թօքանի և թէ Դարբաղ-Բազարի բարձունքներից ու մարտկոցներից թնդանօթային կրակով կարելի է յարձակվողին պահել 10—12 վերստ հեռաւորութեան վրա։ Մնում է մի միակ միջոց. դա նրա աջ կողմից՝ Գիւլլի և Զաֆարլի գիւղերի մօտից, իսկ ձախից՝ Քեօսա-Մահմէդի և Քեչէի մօտով շրջան տալով թշնամու դիրքերի աջ ու ձախ կողմը անցնելն է. այստեղից միայն հնարաւոր է հետևակ զօրքին բարձրանալ դիրքերի վրա, մի բան, որ տեղի ունեցաւ 1877 թ. հոկտեմբերի 23-ին՝ Դէվէ-Բօյնուի ռուսաց զօրքի կողմից առման օրը, երբ գեներալ Տէր-Դուկասով, օգտվելով գեն. Փօն-Շակի կատարած կեղծ յարձակումից, բանակի աջ թևը քաշեց դէպի Ուզուն-Ահմէտ մարտկոցը և գրոհով վերցրեց այն, տալով աննման զոհեր։

Սակայն այդ ժամանակից մինչև այսօր անցել է 38 տարի, և թիւրքաց ռազմագէտները սկզբում անգլիացի, իսկ վերջին 10 տարում գերմանացի ինժեներների օգնութեամբ ու յատակագծերով մինչ այն ատիճան պաշտպանել են դիրքերը արհեստական կրկնակի պատնէշներով, որ նա ներկայումս ամենայն իրաւամբ համարվում է Ասիայի ամենաառիկ ամրութիւնը ոչ պակաս Պերեմիշլից և Բէլֆօրից։

Այդ դիրքերի միակ թոյլ կողմը նրանց շատ ընդարձակութիւնն է, մօտ 25 վերստ, որը, անկասկած, կը պահանջի պաշտպանողների կողմից մեծ թուով զօրք։ Սակայն եթէ և նկատի ունենանք, որ, համաձայն լրագրական տարբեր լուրերի, ներկայումս Երզրումում կենտրոնացած է ոչ պակաս 200,000 հոգուց բաղկացած թիւրքական մի պատկառելի զօրաբանակ, զինված պաշարողական

*) Տես «Матеріалы русско-турецк. войны», հատ. II. երես 175. «Արդիւլ-Համիդի նամակը Մուխթար փաշային»։

— Լաւ մարդ է Բադկօ Դմիտրիևը։ Նա բուլգար է, գիտէք,—դառնում է մեզ—Նրանց թագաւորը չի ուզում օգնել ռուսներին։ Բադկօ Դմիտրիևն էլ ասում է իրանց թագաւորին. «Ես ուզում եմ օգնել, որ դու ռուսներին չես ուզում օգնել, ես էլ բուլգար չեմ,—ասում է,—ես ռուս եմ դառնում»։ Ու գալիս է մեզ օգնելու։ Ապա...

Հիւանդանոցից դուրս գալու ժամանակ մի հայ զինուոր, որը որտեղից որտեղ ձեռք էր բերել թիւրքական մի քանի արծաթ դրամ, գլխին հաւաքված ընկերներին լուրջ դէմքով բացատրում էր դրամների արժէքը և նշանակութիւնը։

— Խալիս արծաթ է, գիտէք. «մէջիդիէ» են ասում։ Եթէ սրան ցից մի բոլ ունենայի, ինչ լաւ կը լինէ՞ր... Խալիս ոսկի է, հասարակ բան չէ... Սրանից մի քանի հատ էլ ախոռս եմ տուել։

Դուրս գալու միջոցին, առաջին սենեակում մենք դարձեալ տեսանք նոյն գերմանացի ռուսական զինուորին։ Նա նախկին տեղը նստած նոյն լուրջ դէմքով գերմանացի մի ընկերոջ հետ անխոս «տամա» էր խաղում։

Առհասարակ բոլոր զինուորների տրամադրութիւնը զուարթ է և ուրախ։ Աստում են, խօսում, ծիծաղում, հանաքներ անում։ Ցանկութիւն են յայտնում նոցից մասնակցել կռւին և տեսնել մերոնց յաղթութիւնները։

— Մենք նոցից կերթանք,—ասում են նրանք։

Սա. Զօրեան

*) Տես «Մշակ» № 247։

վիթխարի թնդանոթներով, լայնատարած պրոժեկտօրներով և ռազմագիտական բոլոր կատարելագործութիւններով, այն ժամանակ պարզ կը լինի, որ մեր քաջարի զօրքի համար, եթէ նա անցնի Հասան-Կալէն և ուղղվի դէպի Էրզրում, բացվելու է ոչ այնքան ռազմագիտական, որքան տակտիկական հնարագիտութեան մի շատ բարդ ծրագիր։ Սալ-Ման

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄ

—

«Рус. Вѣд.»-ի ռազմական բաժնի նկարագրող Ա. Օգլին հետևեալն է ասում ռուս-թիւրքական պատերազմի գործողութիւնների մասին։

«Նոր, հէնց այս օրերս Թիւրքիայի հետ սկսված պատերազմը հաստատութեան հետաքրքրութիւն է գրաւում, գուցէ ոչ պակաս հետաքրքրութիւնը, քան մեր արևմուտեան սահմանում ծաւալվող անցքերը։ Այդ փաստը բացատրվում է ամենից առաջ պատմական յիշողութիւնների կենդանի լինելովը, իսկ յետոյ այն նուաճումների մեծ արժէք ունենալու գիտակցութեամբ, որոնք կանվեն մեր նոր թշնամուն յաղթելուց յետոյ։ Իր պատմութեան ամբողջ ընթացքում Ռուսաստանը ոչ օրի հետ այնքան յաճախ չի կռուել, որքան Թիւրքիայի, և այդ պատերազմները նշանաւոր ժողովրդականութիւն են ստացել։ Նոր պատերազմը մի շարք յիշողութիւններ է զարթեցնում, և հէնց պաշտօնական առաջին հաղորդագրութեան մէջ յիշված անունները ծանօթ անուններ երևացին։ Զիվինը և Բայազիդը ամենքի յիշողութեան մէջ են, ով փոքր ի շատէ ծանօթ է ռուս-թիւրքական վերջին պատերազմի (1877—1878 թ.) պատմութեան, իսկ չէ՞ որ հասակաւոր և միջին տարիք ունեցող մարդիկ առանց գրքի էլ յիշում են այդ պատմութիւնը։ Ահա այդ յիշողութիւններն են, որ ստիպում են մեզ հետևելու Թիւրքիայի հետ սկսված նոր պայքարին առանձին հետաքրքրութեամբ, հաշուի չառնելով նրա կարևորութիւնը ռազմագիտական տեսակէտից։

«Մեր ներկայ թշնամիների շարքում Թիւրքիան հանդիսանում է աւելի քիչ ուժեղ, և նրան, պարզ է, ի զուր է համեմատել ոչ միայն Գերմանիայի, այլ Նոյնիսկ Աւստրիայի հետ։ Այդ պատճառով էլ պատերազմի բեմը մեզ համար ինչպէս եղել է, այնպէս էլ կը մնայ մեր արևմտեան սահմանը, և Թիւրքիայի ճակատագիրը պէտք է վճռվի ոչ թէ Էրզրումին շրջապատող լեռներում, այլ Լեհաստանի, Սիլեզիայի և Պոզնանի դաշտերում։ Ռազմագիտութեան հիմնական օրէնքը պահանջում է չը ցրել ուշադրութիւնը, բոլոր ոյժերը կենտրոնացնել գլխաւոր ռազմաբեմի վրա, երկրորդական ռազմաբեմերին անհրաժեշտ մինիմում զօրք տալով սահմանափակվել։ Եթէ հնարաւոր է անվնաս յարձակում գործել գլխաւոր զօրաճակատի վրա և երկրորդական թշնամու դէմ, այդ կարելի է համարել գործի բարեաջող դրութեան նշանացոյց։

«Մեր զօրքերը անցել են Թիւրքաց սահմանը և կռուով գրաւել են Թիւրքական մի քանի քաղաքներ։ Այդ, ի հարկէ, եղել են երկրորդական ընդհարումներ, որովհետև խոշոր կռիւներ, թէև մասնաւոր ընոյթ ունեցող, պատերազմ յայտարարելու առաջին օրերը չեն լինում։ Ռուսական զօրքերը սահմանը անցել են մի անգամից մի քանի տեղից բաւական լայն ճակատով և Էրզրումի ուղղութեամբ (Զիվինի վրայով) դէպի արևմուտք և դէպի հարաւ պարսկական սահմանի մոտով (դէպի Բայազիդ)։ Այս կերպ սահմանն անցնելը ինքն ըստ ինքեան դեռ չէ կարող վկայութիւն ծառայել, որ հէնց այժմ կարելի կը լինի յարձակման դիմել թշնամու դէմ և բացի այդ իր մէջ նման յարձակման ուղղութիւն չէ բովանդակում։ Այդ ի նկատի ունենալով՝ չը պէտք է մեծացնել մեր գրաւած Զիվինի, Բայազիդի և միւս կէտերի նշանակութիւնը։ Դրանում միայն պէտք է տեսնել մասնակի աջողութիւններ, որոնք արդիւնք են երկրորդական նշանակութիւն ունեցող ընդհարումների։ բայց և այնպէս այդ աջողութիւններն էլ որոշ չափով նշանակալից են։ Նրանք նախ և առաջ վկայում են այն մասին, որ Թիւրքիայի հետ սկված անսպասելի պատերազմը մեզ շփոթված և խառնակ դրութեան մէջ չը գտաւ, որ մեր Թիւրքական սահմանը ուշադիր կերպով պահպանվում է։ Միաժամանակ պատերազմ մղելով Գերմանիայի և Աւստրիայի հետ, մենք ընդհանրապէս մեր ուշադրութեան միայն մի մասը պէտք է դարձնէինք կովկասեան սահմանի վրա, իսկ միւս գլխաւոր մասը գլխաւոր ռազմաբեմի վրա։ Իսկ Թիւրքիան իր տրամադրութեան տակ ունեցել է ամբողջ երեք ամիս, որոնց ընթացքում ամենայն եռանդով պատրաստվել է նա մեզ հետ կռուելու։ Պայմանների այդօրինակ անհաւասարութեան մէջ ոչ մի անհանգիստ բան չէր լինի անգամ այն դէպքում, եթէ պատերազմական գործողութիւնները սկսելու րոպէին՝ Թիւրքիան պատրաստ լինէր աւելի քան մենք, և եթէ նա հէնց սկզբում իր ձեռքն առնէր գործողութեան նախաձեռնութիւնը։ Իրականութիւնը աւելի նպաստաւոր երևաց, քան կարելի էր յուսալ։ Ռուսաց զօրքը պատշաճօրէն պատրաստ երևաց և, անցնելով սահմանը, ռազմական գործողութիւնները փոխադրեց թշնամու հողի վրա։ Թէ ինչպէս կը զարգանան ապագայում այդ գործողութիւնները, այժմ ասել վաղաժամ է։ Սակայն նոր պատերազմի առաջին օրերում տեղեկութիւններ ստացվեցին մեր յարձակման և մեր մասնակի աջողութիւնների մասին, որ վկայում է, թէ Թիւրքիան չօգտվեց իր շահաւէտ դրութիւնից և որ մեր բովանդակ ուշադրութիւնը հանդէպ Գերմանիայի և Աւստրիայի՝ չը ստիպեց մեզ բոլորովին մոռանալ կովկասեան սահմանը»։

ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ԵՒ ԳԵՐՄԱՆԻԱՆ

(Հակամարտութեան ռազմական հիմքերը)

IV

Առաջին. արդեօք յիշածս հակամարտ պետութիւններից ո՞րն է ճնշել ու շահագործել միւսին առևտրական փոխ-շփումների ընթացքում. Գերմանիան թէ Ռուսաստանը։

Երկրորդ. արդեօք դրանցից ո՞րը ունի շանսեր ու տենդենցներ ինքնուրոյնանալու և անկախ դիրք ստեղծելու, ասել է՝ առևտրական հողի վրա ազատագրվելու իր՝ օտարից ունեցած կախումից։

Նոյնքան կենսական, որքան և ժամանակաշրջանակութիւն ունեն այս հարցերը մեր կեանքի երկրի, մեր ժողովրդատնտեսութեան համար։ Եթէ այդ հարցերը առաջ աւելի շատ ակադեմիական հետաքրքրութիւն և պրոբլեմատիկ նշանակութիւն ունէին, այժմ, պատերազմից սպասվելիք յեղաշրջումների շնորհիւ, այդ ինդիրները դարձել են գործնական քաղաքագէտների պետական ֆինանսական հետաքրքրութիւնների բնագաւառում ամենահրատապ ու վճռական պրոբլեմը։

Տուածս վերոյիշեալ հարցերը ունեն հաւասարապատասխաններ։

Ռազմապէս հզօր և արդիւնաբերական տեսակէտից աւելի քան ուժեղ Գերմանիան և՛ ճնշել, և՛ շահագործել է ռազմական պրեստիժը կորցրած (ռուս-եապոնական պատերազմից յետոյ) ու ամենապէս թոյլ զարգացած Ռուսաստանին. նա եղել է վերջնիս առևտրական գաղութի պայմաններ թելադրելու տիրական վիճակի մէջ։ Եւ իբրև այդպիսին՝ Գերմանիան կնքել է Ռուսաստանի հետ առևտրական պայմաններ բացառապէս յօգուտ իր արդիւնաբերութեան և ի վնաս ռուսական երկրագործութեան։

Ահա առաջին հարցի պատասխանը։

Սակայն այդպիսի մի դրութիւն չէր կարող տևական լինել, որովհետև Ռուսաստանը ոչ օտարի կոխան ու նեխված-փտած Թիւրքիան էր և ոչ սոսկ շահագործվելու վիճակ ընտրած մի երկրորդ Հնդկաստան։ Ռուսաստանը, իբրև եւրոպական վեց մեծ հզօրներից մէկը՝ իր տնտեսական ինքնուրոյն քաղաքականութեամբ, կարողացել է նաև զարգացնել իր ծոցում՝ թէև դանդաղ ու երերուն քայլերով՝ ազգային արդիւնաբերութիւն, որ կարողացել է մինչ այժմ մասայական շատ ու շատ պահանջների բաւարարութեան տեսակէտից ազատագրել ներքին շուկաները օտարի մրցութիւնից և ինքը գրաւել ամուր դիրքեր։

Սրանով արդէն մենք պատասխանում ենք երկրորդ հարցին։ Սակայն այդ դեռ բաւական չէ։

Ռուսաստանը գտնվում է անբաւ բնական հարստութիւնների, հում նիւթերի և երկրագործական լուռատ բերքերի բաղդաւոր վիճակի մէջ։

Ահա մեծագոյն գրաւականը նրա աշխատական ազատագրութեան խոշոր ապագայի։

Մեր լայնածաւալ հայրենիքը կարող է ժամանակի ընթացքում ինքն իրան բազմակողմանիօրէն բաւարարել և ոչ միայն ըստ ամենայնի ազատագրվել օտարի աշխատական թելադրանքից, այլև նրան դնել իրանից կախման վիճակի մէջ։ Ռուսաստանը ունի շարունակաբար զարգացող ուժգնագոյն ինքնուրոյն արդիւնաբերութիւն, այդ արդիւնաբերութեան (գործարանական աշխատանքի) համար պահանջվող հում նիւթեր անսպառ քանակով և հացահատիկների (ուտեստի) լիառատ պաշար։ Ռուսաստանն է՝ ողջ Եւրօպայում, որ կարող է երկրորդ ամերիկան (Մխացեալ Պետութիւնների) անկախութիւն ստեղծել ժողովրդատնտեսական կեանքում և ապահով տանել հնչեցնել Մոնրօէի դոկտրինայի հարատև լօզունգը՝ «Ռուսաստանը ռուսաստանցիների համար»։

Տրամադրօրէն հակադիր վիճակի մէջ է գտնվում Գերմանիան։ Սա կարող է ինքն իրան բաւարարել միմիայն իր փարթամ ինդուստրիայի արդիւնքներով։ Սակայն հէնց նոյն այդ փարթամ ինդուստրիան չէ կարող նոյն այդ փարթամ ինդուստրիան չէ կարող իր զօրութիւնը պահպանել առանց ընդարձակ, սպառելու ընդունակ օտար շուկաների. շուկաներ, ուր նա արտահանել և վաճառել կարողանայ իր յաւելեալ արտադրութիւնը, և շուկաներ, որտեղից նա մայր երկիրը ներմուծել կարողանայ հում ու կիսամշակ նիւթեր։ Միւս կողմից՝ օտար շուկաներ են հարկաւոր երկաթէ անհրաժեշտութեամբ, որտեղից ինդուստրիական Գերմանիան իր ուտեստի պաշարը հոգալ կարողանայ։ Նշանակում է՝ Գերմանիան է, վերջին հաշուով, կախված վիճակի մէջ ռուսական անտեսական կեանքից, և ոչ հակառակը։ Գերմանիան չէ կարող անվնաս «հոլա» գնալ առանց Ռուսաստանի։ սրա շուկաների կորուստը անհամեմատելի հարուած է նշանակում Գերմանիայի ողջ ժողովրդատնտեսութեան համար։ Ո՞րտեղից և ինչ գնով կարող էր Ռուսաստանին փոխարինել մի այլ գաղութային շուկայ, որտեղից կարողանար Գերմանիան ներմուծել այն հսկայական պաշարը հացահատիկների, ինչ նա ներմուծում է իր երկիրը Ռուսաստանից։ Օրինակ Ռուսաստանի մասնակցութիւնը ցորենի և հաճարի ընդհանուր ներմուծման մէջ դէպի Գերմանիա եղել է այսպէս.

	ցորեն	հաճար
1884—1888 թ.	48,3%	61,4%
1889—1893 »	36,0%	71,1%
1894—1898 »	49,1%	76,7%
1899—1903 »	28,8%	92,4%
1904—1908 »	31,8%	80,4%
1909 »	44,2%	92,0%
1910 »	64,5%	92,1%

Լաւ նայեցէք այս տոկոսական թիւերին։ Այսպիսի առատաւոր հացահատիկների չունի Գերմանիան ոչ մի այլ պետութեան հետ։ Ցորենի ներմուծման մէջ Ռուսաստանի մասնակցութիւնը հասել է 64,5%-ի, իսկ հաճարի ներմուծման մէջ՝ 92,1%-ի։ Նշանակում է՝ Ռուսաստանը չունէր այդ տեսակէտից օրէէ ուժեղ մրցակից իր հանդէպ գերմանական ներքին շուկաներում։ Եղած տատանումները զանազան տարիների ընթացքում եղել են արդիւնք ոչ թէ հակառակորդների ուժեղ մրցութեան, այլ ռուսական վատ հունձի, որ հնարաւորութիւն չէ տուել սովորական քանակով հացահատիկներ արտահանելու։

Ո՞րն է այս փաստական դիտողութիւնների կոնկրետ եզրակացութիւնը։ Այն, որ վաղը, Գերմանիայի պարտութեան դէպքում, Ռուսաստանի ամենամեծ շահագրգռողներն օգուտը կը լինի այն, որ նա կազատագրվի Գերմանիայի անտեսական ճնշումներից և շահագործութիւնից, ուրիշ խօսքով՝ կը լուծվի ռուս-գերմանական առևտրական հակամարտութեան պրոբլեմը յօգուտ ռուսական ժողովրդատնտեսութեան։

Կասկած չը կայ, որ պատերազմին յաջորդող խաղաղութեան շրջանում կը վերսկսվի ռուս-գերմանական առևտրի ընդհատված յարաբերութիւնը. սակայն նախ այդ յարաբերութիւնը կը լինի անհամեմատ թոյլ, քան մինչև այժմ է եղել, երկրորդ՝ նոր առևտրական դաշնագրի պայմանները կը թելադրէ արդէն այսուհետև ոչ թէ թուլացած Գերմանիան, այլ ուժեղացած Ռուսաստանը։

B. Lucifer

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

—o—

ՀԱՑ ՈՒՍԱՆՈՂՈՒԹԵԱՆ ՄԵՐ ՈՂՋՈՅՆՆԵՐԸ

—

Խնարհում ենք մեր գլուխները և ողջունում ենք հայ ուսանողութիւնը, մեր ազգի աղը, մեր ազգի ապագայ յոյսը։

Պետրոգրադից, Մոսկվայից նրանք շտապում են մեր երկիրը։

Նրանք թողել են հանգստարան, գրքեր, լուսաւորութիւն և առել են ձեռներին սուրեր, հայենիք կենդանացնելու համար...

Գեղեցիկ շեշտեց մէկը նրանցից. «Մենք մեծ գործեր անելու համար չէ, որ օտարի ելանք. մենք գնում ենք մեռնելու հայրենիքի համար»։

Բայց դա արդէն մեծ գործ է՝ թողնել հանգստարան և գնալ մեռնելու...

Հայ ուսանողութիւնը ըմբռնել է ներկայ պատմական րոպէն։

Գեղեցիկ է լոյսը, որ թափանցում է խաւարը և քշում է նրան, ինչպէս կեանքը քշում է մահը, և մեծ է, սուրբ է լուսաւորութեան գաղափարը։

Բայց աւելի մեծ է, աւելի սուրբ է հայրենիքի վերածնութեան գաղափարը։

Պատմական րոպէն դրեց մեր առաջ հարց՝ լինել թէ չը լինել։

Եթէ չը լինելը զրված է անագորոյն սև տառերով և մեր ազգին վիճակված է չը լինել, արժէ լուսաւորվել, ապրել և քարշ տալ անասնական սարկական կեանք։

Իսկ եթէ լինելը պէտք ազատ ազգը կործանումից, մի՞թէ չարժէ մեռնել դրա համար, եթէ այդ մահով մենք պէտք նպաստենք այսպէս թէ այնպէս սուրբ և վաղուց երազած մեր գործի իրականացմանը։

Արժէ, արժէ, և ահա ինչու հայ ուսանողութիւնը գնում է կատարելու իր պարտքը և դրանով մաքրել, սրբել և մեծացնել իր անունը։

Հաղարաւոր հայեր, որ Նոր-Նախիջևանից և Բաստրվից եկել էին հոկտ. 28-ին կայարան ողջունելու մեր ուսանողութիւնը ծաղիկներով, երգերով, մեծ ոգևորութեամբ, կարծես զգել էին այն հին առաջվայ ուսանողութիւնը՝ վեհանձն, աղնիւ, նուիրված իր ազգին. և ինձ թուում էր, որ մի քանի խոսքեր աւելորդ մատնանիշ էին անում, թէ երբեմն հայ ուսանողութիւնը մոռացել էր իր հայրենիքը և այժմ վերադառնում է նրան, իբրև զաւակը հօրը...

Պատմական րոպէները ստեղծում են քաջեր և տաղանդներ, եթէ ազգը կենսունակ է։

Մենք ողջունում ենք մեր հայ ուսանողութիւնը։ Նրանց հետ կը լինեն մեր խոհերը և յոյսերը, մեր մաքերը և մեր սրբութիւնը։

Հայութիւնը չի մոռանայ նրանց երբէք։

Կեցցէ՛ մեր հայ ուսանողութիւնը։

Դր. Զալիսուշեան

ԱԶԱՏ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

—

Հերթը Արաքսին եկաւ։

Նեմանից ու Մասրից յետոյ, այժմ դարաւոր Արաքսի շամբուտները պիտի արեան շերտեր կապեն։

Վիսլայից և Սանից յետոյ, հիմա մեր մայր-գետի աւազոտ ափերը պիտի մարդկային գնդակահար դիակներ փսխեն...

Հայաստանի ապառաժ լեռներում թնդացին հրացանների ճարճատումները և նրա մութ ձորերում ոռնացին ամենի թնդանոթները։

Իսկ լեռների բարձր գագաթները հազարհազար բերան ձայն տուին հրաֆիզների այդ զարկ ու օրօրին։

Եւ այդ արձագանքների միջից լսում եմ ես մի հառաչ, մի աղեկոտուր մրմունջ, որ այնքան ծանօթ է մեր ականջին։

Այնտեղ լսում եմ ես հին ողբն ու լացը, որ դարեր, դարեր շարունակ քրքրեց մեր սիրտը, պղտորեց մեր արիւնը, քամեց մեր հոգին։

Բայց ոչ։

Այդ արձագանքների մէջ իմ ականջին են հասնում և այլ ձայներ։

Ահա, լսում եմ ռուսական հիմնը ձուլված հայկական հիմնի հետ, ռուսական զինուորական մարշը՝ զէյթունցիների քայլերգի հետ։

Լսում եմ յաղթութեան ցնծագին աղաղակներ և սարկութեան ջարդված շղթայի շռնդիւն...

Հայ ժողովուրդ։

Պատմութիւնը քեզ հարցաքննութեան է կանչել։

Դու պիտի ասես՝ ուզում ես ապրե՞լ թէ մեռնել ընդմիշտ։

Կեա՞նք թէ մահ։

Գիտցիր քաջ, որ մի ազգ մեծ է ոչ թէ իր քանակով, այլ իր ներքին ունակով։

Այդ հարատութիւնը, այդ կենսական ոյժը անբաւ ու անտակ է քո մէջ։

Մեծ է քո թափը, լայն՝ քո թռիչքը, վըսեմ, քո խոյանքը։

Ես հաւատում եմ քեզ։

Վերջապէս հասաւ ժամը։

Քո արիւնը այլ ևս չը պիտի շիթեաս քո դարաւոր թշնամու սրի տակ իբրև սարսուռ։

Դա քո անցեալն էր։

Այսօր քո արիւնը պիտի թափես իբրև ազատագրվող, հերոս ժողովուրդ ու այդպէս քայլես դէպի քո ապագան։

Սրբիր արտասուքդ, հանիր քո սգազգեստը։

Պատմութեան անիւը շրջեց. կեցցէ՛ պատմութիւնը։

Քո բաղդի տնօրէնը այսօրվանից դու դարձար. քոնն է յաղթանակը։

Մոսկվա Կարէն Միքայէլեան

ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ ՀԱՑԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

—

Գրական-Գեղագիտական Սալօնի ուրբաթ օրվայ երեկոյթը ամբողջովին նուիրված էր հայկական հարցին։ Հաւաքվել էր բաւական մեծ բազմութիւն. ներկայ էին նաև Պետրոգրադից և Մոսկվայից եկած կամաւոր ուսանողներից մի քանի հոգի։

Երեկոյթը բացեց բժշկ. Բ. Նաւասարդեան, որ և նախագահեց, մի քանի խօսքով յայտնելով, որ Գրական-Գեղագիտական Սալօնը այդ օրվանից սկսում է իր մի քանի երեկոյթները նուիրել հայկական հարցի ուսումնասիրութեան և այսուհետև ամեն ուրբաթ օրվայ հերթական երեկոն նուիրված կը լինի նրան։

Առաջինը խօսեց Հ. Առաքելեան, որ յայտնելով, թէ հայկական հարցը, այն է Թիւրքաց Հայաստանի ազատագրութեան հարցը այսօր ոչ միայն կազմում է Արևելեան մեծ հարցի մի մասը, այլ և համաշխարհային հարց, չնորհիւ այն հանգամանքի, որ Թիւրքիան ևս մտել է համաեւրոպական պատերազմի շրջանակի մէջ, թէ այդ հարցը օրքան հրատապ, այնքան և ամենափափուկ բնաւորութիւն ունի, կցեց, թէ մենք ևս ամենամեծ լրջութեամբ և փափկանկատութեամբ պէտք է մօտենանք այդ հարցին։ Ապա նա մի համառօտ պատմական ակնարկ ձգեց հայկական հարցի վրա և այն կարծիքը յայտնեց, թէ հասել է ժամը, երբ մենք հայերս ամենայն անկեղծութեամբ և հաստատակամութեամբ պէտք է յայտնենք մեր ցանկութիւնը և պահանջը Հայաստանի ապագայ վարչական կազմակերպութեան մասին։ «Հայոց հարցի լուծման համար,—ասաց նա,—առաջարկվել են և առաջարկվում են մի քանի եղանակներ—լայն ռէֆորմներ, աւտոնոմիա, անեքսիա և այլն։ Այդ եղանակներից ո՞րն է աւելի օգտակարը և նպատակայարմարը այն բազմաչարչար ժողովրդի համար, որ դարերով հեծում է Թիւրքական լծի տակ—ահա այդ հարցը մեր քննութեան և հոգսերի առարկայ պէտք է դառնայ և մենք պէտք է մշակենք մի ծրագիր, որ համապատասխան լինի ամբողջ հայ ժողովրդի ցանկութեան և իղձերին»։

Հետևեցաւ խօսեցին բժշկ. Բ. Նաւասարդեան, Գ. Վարդանեան, Ց. Սօլօվեան, Սողոմոնեան, Ս. Կանայեան, Ս. Թառայեան, Մ. Զմշկեան, Համբարձումեան և կամաւորուսանողների կողմից ուսանող Շահդաղեան։ Վերջինս խօսեց երկար և խիստ զգացված և նրա ճառը խոր տպաւորութիւն թողեց։ «Մենք բերկրութեամբ գնում ենք մեռնելու,—ասաց նա,—և գուցէ ձեզ այլ ևս չը տեսնենք. բայց գնում ենք գիտակցաբար, գնում ենք զոհելու մեզ օրոշ սկզբունքի համար—ազատ աւտոնոմ Հայաստան ընդ հովանաւորութեամբ Ռուսաստանի տեսնելու համար։ Այն օրից, երբ Նալբանդեանը իր ձեռքը մեկնեց Հերցէնին, հայ ուսանողութիւնը միշտ ընթացել է ռուսական առաջնաւոր ինտելիգենցիայի հետ»։

Ի վերջոյ ժողովը օրոշեց ընտրել մի մանաժողով, որ զբաղվէ հաւաքել և մշակել նիւթեր հայկական հարցի համար ու պատրաստել զեկուցագրեր, որոնք կը քննվեն յաջորդ ժողովում։ Ընտրվեցին Հ. Առաքելեան, բժշկ. Բ. Նաւասարդեան, Տ. Նազարեան, Ա. Աթանասեան, Ա. Նազարէթեան, Ց. Սօլօվեան, Ց. Ակօնեան, Համբարձումեան, բժ. Բ. Աղասարեան, Ս. Կանայեան և Ս. Զէրքէզեան։

ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԻՒՆԸ

—

Հոկտ. 29-ին կայացաւ տեղական վաճառականների ժողովը զօրքին պանսան ապրանքներ տալու հարցի մասին։ Ժողովին ներկայ էին բացառապէս մանուֆակտուրիստներ և ձմերային տաք կտորներ և իրեր վաճառողներ։

Վաճառականութեան նախագահ Ար. Միլեան ժողովը բանալով յայտնեց հետևեալը.

— Պարոնայք, հոկտ. 28-ին, փոխարքայի զինուորական մասի օգնական գնդ. Ա. Զ. Միշլայեվսկի հրաւիրեց ինձ իր մօտ և իր դժգոհութիւնը յայտնեց մեր վաճառականութեան հասցէին այն պատճառով, որ նրանք դիտմամբ թագցնում են բամբակէ և այլ տաք կտորները, որ հարկաւոր են զօրքի համար, և այն ցոյց չեն տալիս զբաւոր յանձնաժողովին։ Դրա հետ միաժամանակ գնդ. Միշլայեվսկի յայտնեց, որ այդ տիպը հասել է փոխարքայի ականջին, և նա խիստ դժգոհել է։ Փոխարքան յանձնարարել է քննել այդ հանգամանքը, զգուշացրել վաճառականներին և հաղորդել, որ եթէ նման արարքները շարունակվեն, այն դէպքում յանցաւորները խիստ պատժի կենթարկվեն։ Այս օրերս,—վերջացրեց Միլեանը իր ասելիքը ժողովին,—երկու վաճառական արդէն պատժվել են ապրանք թագցնելու համար. ես յոյս ունեմ, որ նման դէպքեր չեն կրկնվի։ Փորձութեան այս տեղ ժամին մենք պէտք է կանգնենք մեր դիրքի բարձրութեան վրա և ամեն կերպ թեթևացնենք մեր քաջարի զօրքի կարիքները։ Աշխատենք, որ այսպիսի ստորացուցիչ դէպքեր այլևս չը լինեն մեր մէջ։

Այնուհետև Արշակ Միլեան յայտնեց, որ՝ Թիֆլիսի նահանգապետի որոշման համաձայն, բոլոր վաճառականները 3 օրվայ ընթացքում պէտք է յայտարարութիւն տան իրանց խանութներում և պահեստներում ունեցած բամբակի և տաք ապրանքների մասին, իսկ այնուհետև, յայտարարութիւնը տալուց յետոյ, այդ ապրանքների վաճառումը պէտք է դադարեցվի մինչև գրաւոր յանձնարարութեան ժողովի երևումը։

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Սարգսանքներ Էջմիածնից

Էջմիածին, 26 հոկտ.

Երէկ ճաշից յետոյ Իգդիրից բերին 209 Թիւրք գերիներ, որոնց մէջ և 6 օսմանեան օֆիցէր. գիշերս մնացին այստեղ և այս առաւօտ ժամը 6-ին տարան Երևան։

Այստեղ սրտատրոփ սպասում են նոր և նոր տեղեկութիւնների։ Երէկ յամառ կերպով խօսում էին, թէ ռուսները Վանը վերցրել են. այս լուրը մեծ հրճուանք և անկասկածելի ցնծութիւն առաջ բերեց այստեղ։ Գէորգեան ճեմարանի սաները երեկոյեան թէյի ժամանակ հսկայական ցոյց կազմեցին։ Լսվում էին անվերջ բացականչութիւններ, ուրախ աղաղակներ և ծափեր։

Այստեղ գտնված ռուս զօրքերը առանձին գուրգուրանքի առարկայ են. նրանք երէկ և այսօր այցելեցին Իջման տաճարը և երկիւղածութեամբ համբուրեցին սրբերի նշխարները՝ Գեղարդը, ս. Գրիգոր Լուսաւորչի աջը և միւս սրբութիւնները։ Երեկոյեան ճեմարանի բակում զինուորները մտերիմ խօսակցութեան մէջ մտան աշակերտների հետ. մի խմբում խօսում էին կրօնական հարցերի մասին. ճեմարանցու երկար և համառիչ խօսքերից յետոյ ռուս զինուորը հանգստութեամբ և խմաստասիրութեամբ ասում է. «Не пому, какъ ты меня поварачиваешь!» և շարունակվում է զրոյցը։ Այստեղ ռուս զօրքերը զգում են իրանց հարազատ տան մէջ։ **

—

Մաղթանք

Նուխի, 29 հոկտ.

Ամսոյ 27-ի առաւօտեան ժամը 9-ին տեղիս սիւնի և շիա դաւանութիւնների հազարաւոր մահմեդականներ հաւաքվել էին Դարախանայի Զուսա մզկիթը՝ Թագաւոր Կայսրի և Օգոստափառ Ընտանիքի արևշատութեան և մեր զօրքերի յաղթութեան համար աղօթելու։

Նախ քան մաղթանքը Նուր Մամադ էֆէնդին, խօսելով ներկայ ահռելի պատերազմի մասին, դրուատեց ռուսաց մեծ և հզօր տերութեան առաքինութիւնները։

Մաղթանքին ներկայ էր տեղիս գաւառապետը։ Վերջում խնդրեցին գաւառապետին արկանել առ ոտս Թագաւոր Կայսրի՝ Գա-

հպատակութեան զգացումները հաստատացումները։ Մ. Գէորգեան

—

Դարձեալ աւազակային խումբ

Լագօդաղ, 27 հոկտ.

Աւազակապետ Գիորգի Խարայաշվիլին սարսափ է ձգել աւանիս և շրջակայ գիւղերի ընակչութեան վրայ, մահվան սպառնալիքի տակ նամակներ է գրում և դրամ պահանջում, մինչև անդամ զինված՝ անձն է մըտնում՝ ովքեր չեն կատարում իր պահանջները. չը նայելով ոստիկանութիւնը հետևում է, բայց դեռ չէ աջողվում բռնելը. աւազակային խումբը, ինչպէս ասում են, բաղկացած է 4—5 հոգուց

Բաղ. ք. Սուքիասեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

Երէկ, Երևանեան հրապարակում, Պիտիրիմ արքեպիսկոպոսի գլխաւորութեամբ ռուս հոգևորականութիւնը «Կարմիր Խաչի օրվայ» առիթով մաղթանք կատարեց։

Երէկ «Կարմիր Խաչի օրը» մեծ աղաղութիւն ունեցաւ։ Դրան նպաստեց մանաւանդ պայծառ եղանակը։ Քաղաքը զարդարված էր դրօշակներով։ Հրապարակներում կիոսկներ էին շինված, ուր Կարմիր Խաչի նշաններ էին ծախվում։ Փողոցներում շըրջում էին Կարմիր Խաչ վաճառող զոյգեր։ Էլեքտրաքարշը ձրիաբար տեղ էր տուել Կարմիր Խաչ վաճառողներին։ Հասարակութիւնը ամենայն սիրով Խաչի նշաններ գնելով իր կուրծքը զարդարում էր նրանցով։

Ուրբաթ, հոկտ. 31-ին, Թիֆլիս հասան Պետրօգրադից և Մոսկվայից ճանապարհ ընկած հայ ուսանողները, որոնք իբրև կամաւորներ պէտք է գնան պատերազմելու ռուսական զօրքի մէջ Թիւրքիայի դէմ։ Նրանց թիւը 60 է։ Նրանք մի քանի օր կը մնան Թիֆլիսում։ Թիֆլիսի կայարանում նրանց ոչ ոք չէ դիմաւորել, և որովհետև շատերը Թիֆլիսեցի չեն, ուստի կէս գիշերին նրանց համար դժուար է եղել հիւրանոց կամ ընակարան գտնել։ «Թէկ մենք հեռագրել էինք այստեղի բիւրոյին,—յայտնեցին նրանք մեզ,—բայց կամ մեր հեռագիրը չէին ստացել, կամ անուշադիր էին թողել»։

Այսօր, նոյեմբերի 2-ին, դումայի դահլիճում կայանալու է «Սլաւոնական շաբաթ» կազմակերպող կոմիտէի նիստը, գործող զօրաբանակը տաք իրեր և չոր մթերքներ ուղարկելու համար լիազօրներ ընտրելու։

Նահանգապետը թոյլատրել է իշխ. Պ. Բեհբութեանին, նոյեմբերի 3-ին, երկուշաբթի օրը, Աբտիսական Ընկ. թատրոնում ներկայացում-համերգ կազմել կովկասեան բանակի հիւանդ և վիրաւոր զօրականների համար։

Այսօր, ժամը 2-ին, բացվում է վաճառականների հիմնած լազարէթը։

Այսօր Խօջիվանքի գերեզմանատանը հոգեհանգիստ է կատարվելու հանուցեալ Սիմէոն Զաւարեանի մահվան տարեդարձի և նորերս վախճանված Նիկոլ-Դումանի քառասունքի առիթով։

Հայ Գիւղատնտ. և Տնայնագ. Ընկ. գաւառներում, պահեստիների գիւղատնտեսական դրութիւնը պարզելու համար, ցրած 1200 անկէտային ըլանկներին առ այժմ 300 պատասխան է ստացվել։ Այդ պատասխանները մշակվում և դասաւորվում են այժմ, և, երբ անկետան վերջնական բոլորովին, Ընկ. առանձին հրատարակելու է այդ։

Մենք հաղորդել էինք, որ «Մենդեան վաճառքի» կոմիտէը կազմված է 37 հոգուց։ Դրանք հետևեալ անձինքն են. տիկիններ Ա. Վասելովզորովա, Զախարսկայա, Մայսուրեան, Նուսուֆարեան, Մանուչարեան, Մուսսելիուս, Ռուդոլֆ, Իւդենիչ, Ժուրուլի, Կորգանովա, Մ. Գ. Միակեվիչ, Բերխամ, Զալենկովա, Վ. Մ. Թայիրեան, Տէր-Ներսէսեան, Օսեցկայա, Եղիազարեան, Կ. Ֆ. Խատիսեան, Ա. Ն. Միշլայեվսկայա, Իշխանուհի Ղաջար, Բերժէ, Վ. Ի. Շուլման, Եարալովա, Իշխանուհի Մ. Մ. Սումբաթովա։ Պարոնայք՝ Նակուզովիչ, Հ. Ա. Առաքելեան, Մ. Ի. Բերբերեան, Գ. Մ. Պաւլով, Ա. Վ. Զօչիա, Գ. Դ. Ժուրուլի, Պ. Ա. Գոտուա, Շ. Վ. Ալէքսէեվ-Մեսխիեվ, Իշխ. Պ. Ի. Թումանով, Ա. Ս. Բաբեան, Ի. Մ. Դօլուխանեան, Ալղաթանով, Վ. Դ. Մամուլեան։

Երեքշաբթի, նոյեմբերի 4-ին, կայանալու է վիրաւորներին օգնելու համար «Մենդեան ատնավաճառ» կազմակերպող բիւրոյի նիստը։

Արդէն վերջացել է դէպի Նաթլուղ կայարանը տանող էլեքտրաքարշի գիծը, և մօտ օրերս կը սկսվի վագոնների երթևեկութիւնը։

—

ԿՈՎԿԱՍ

Բաղուից հեռախօսով յայտնում են «Кавказское Слово»-ին, որ այնտեղ, քաղաքումայի նիստի ժամանակ տեղի է ունեցել հետևեալ միջադէպը։ Քաղ. վարման համաձայնել է, վարչութեան զեկուցումից յետոյ, $1^1/_2$ միլիոն ռ. տալ ջրանցքներ կառուցող կապալառու Գրիֆֆասին։ Դումայի իրաւասուներից մի քանիսը քննութեան են ենթարկում վարչութեան արած գործը, որ քաղաքին $1^1/_2$ միլիոն ռուբլու կորստա է հասցնում։ Քաղաքագլուխ Բիշը յուզված տոնով վստահութեան հարց է դնում և, ի միջի այլոց, ասում.

— Ես չեմ կարող բաւականաչափ ուժեղ արտայայտութիւններ գտնել, որպէս զի դումային իմ զայրոյթը յայտնեմ։

Քաղաքագլուխն պատասխանեց իրաւասու Վերմիշեան։ Քաղաքագլուխը այժմ հիւանդ է և զբաղմունքների չէ գնում։

Այս օրերս կը լուծվի կովկասեան բուժիչ կուրորտների հարցը։

ԹԱՏՐՕՆԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Ժողովրդական Տան ռուս թատերախմբերի խումբը 3-րդ անգամ հոկտ. 30-ին ներկայացրեց «Старый Закалъ» պիէսը։ Խաղը աջող էր։

Ռուս դրամատիկ խումբը պատրաստվում է այս օրերս ներկայացնել Լէոնիդ Անդրէեվի «Թագաւոր, օրէնք և ազատութիւն» պիէսը։

ՄԱՄՈՒԼ

«Кавк. Слово» թերթը մի առաջնորդող յօդուածով բացատրում է, թէ ինչու նա դժուարանում է այժմ օրոշակի կերպով իր կարծիքը յայտնել Թիւրքաց Հայաստանի ապագայ վարչական կազմակերպութեան մասին։

«Անհամբեր մարդիկ արդէն բաժանել են Թիւրքիան, զինաթափ են արել քիւրդերին և լուծել են բոլոր համաշխարհային հարցերը»—այս խօսքերով է սկսում լրագիրը իր յօդուածը և ակնարկելով տեղական մի հայ թերթի արտայայտած դժգոհութիւնը, շարունակում է.

Մենք չենք պատմում մեր պլանները Եւրոպայի և Ասիայի վերաձևման մասին այն հաստատակ պատճառով, որ այժմ չէ կարող լինել որևէ ճիշդ օրոշ պլան։

Ճիշդ պլանները կախված են մի շարք հանգամանքներից, որոնք կը պարզվեն միայն հաշտութիւնը կնքելու րոպէին։ Իսկ առ այժմ կարելի է խօսել միայն այն հիմնական պրինցիպների մասին, որոնք պէտք է կազմեն այդ հարցերի լուծման հիմքերը։

Մատնացոյց են լինում «Рус. Слово» թերթի արտայայտած որոշ կարծիքի վրա։ Բայց Մոսկվայի այդ լրագիրը նոյնչափ օրոշ պատուիրում էր պատերազմ խաչի ընդդէմ մահիկի երկու տարի առաջ, բալկանեան պատերազմի ժամանակ։ Բարեբաղդաբար, «Рус. Слово»-ի հայացքը վճռողական դեր չէ խաղում ռուսական հասարակական կարծիքի մէջ։ Եւ սակայն այդ հայացքները ունեցան մի փոքր բացասական ազդեցութիւն։ Յիշենք բազմաեցիների վերաբերմունքը դէպի Միլիւկովը, երբ նա եկաւ Կովկաս իր դասախօսութիւններով բէֆորմների մասին Թիւրքաց Հայաստանում։

Սակայն խօսել բոլորի առաջադրած հարցերի մասին անհրաժեշտ է, որպէսզի մշակվի հիմնական սկզբունքային վերաբերմունք դէպի այդ հարցերը։

Մենք արդէն ասել ենք, որ, մեր կարծիքով, Թիւրքաց Հայաստանի հարցը բացառապէս հայկական կամ Թիւրքական հարց չէ։ Նա առաջ է եկել այժմ իբրև համաշխարհային հարց, որովհետև Թիւրքիայի մուտքը պատերազմական գործողութիւնների մէջ դարձրել է եւրոպական պատերազմը համաշխարհային։

Ապագայ բոլոր անգլօ-ռուս-ֆրանսիական յարաբերութիւնների համար անգին նշանակութիւն կունենայ՝ թէ ինչպէս կը լուծվի այդ հարցը։ Ռուսի և տեղական վէճերը նրա ձևերի և մանրամասնութիւնների մասին կարող են ունենալ միայն բացառական նշանակութիւն, իբրև թուլացնող տեղական ձայնը, օրն, այնուամենայնիւ, հաշի պէտք է առնեն։

Ապա լրագիրը ասում է. Ռուսաստանը ամենևին շահագրգռված չէ մի քանի աւելորդ նահանգների գրաւմամբ, շատ խառն ազգաբնակութեամբ, որոնց փոխադարձ յարաբերութիւնները չափազանց խճողված են։ Սակայն հանգամանքներն այնպէս են դասաւորվել, որ Թիւրքաց Հայաստանը այլևս չէ կարող մնալ Թիւրքերի իշխանութեան ներքոյ։ Միւս կողմից փորձը ցոյց է տուել, որ եւրոպական հաւաքական կօնտրոլն ևս Փոքր Ասիայում ոչ մի օգուտ չէ կարող բերել։ Հետևաբար ծագում են մի շարք բարդ հարցեր—Ռուսաստանի, Անգլիայի, Ֆրանսիայի շահերը, հայերի շահերը, քիւրդերի շահերը և այլն։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Բաշա, 21 հոկտեմբերի

Մենք՝ ներքոյ ստորագրեալ բաշաբնակ հայրենիներս՝ մեր ամենախորին զայրոյթն են յայտնում այն հայ կանանց, որոնք քաղաքումս, ներկայ հոկտեմբերի 19-ին, միանալով մի խումբ դաւադիր տղամարդկանց՝ բազմաթիւ օտարազգիների և պարսիկ ժողովրդի ներկայութեան՝ անօրակելի յարձակում են գործել տիրուհի Արեգնազան Աւէքսանդրեանի տան վրա և թևիցը քաշտալով փողոց են շպրտել նրան իր ընակարանից՝ իր փոքրիկ զաւակներով, ռնգի խլելով նրա ծծկեր երեխային իր օրօրոցից, անից դուրս են տարել նրա բոլոր անային իրերը, ցրվել են նրա ընտանեկան յարկի օջախը և դրանով այդ հայ կանայք ոչ միայն դաւաճանել են մեր ցեղային ազնվական համեստութեան և ամօթխածութեան, վնասել են հայ կնոջ դարաւոր պարկեշտութեան համբաւին, ոչ միայն ոտնատակ են արել կանացի սրտի մայրական գութը, այլ ընդարձակել են մարդկային ամենանուիրական և սրբազան իրաւունքները՝ ընակարանի, անձի և ինչքի անձեռնմխելիութիւնը։

Արտայայտում ենք նաև մեր խորին զըզուանքն այն ոստմարդկանց, որոնք մեղմացնելու կամ բոլորովին ազատվելու համար իրանց գործած քրէական յանցանքի պատասխանատուութիւնից՝ մտել են իրանց կանանց փէշերի տակ։

Մարիամ Ց. Գալստեան, Ովսաննա Ցարութիւնեան, Ովսաննա Ռշտունի, Մարիամ Ա. Յորդանանեանց, Մաթենիկ Պ. Թաշճեան, Թագուհի Յորդանանեան, Վարվառ Խ. Մանուկեան, Թագուհի Մանուկեան, Հռիփսիմէ Ց. Սարգսեան, Քրիստինէ Զարիֆեան, Օլենկա Մկըրտումեան, Թամար Ղազարեան, Տ. Օ. Ղազարեան, Լուսիկ Պետրոսեան, Ե. Յովհաննիսեան, Թամար Գասպարեան, Յամիկ Գասպարեան, Թագուհի Ասատուրեան, Սօնա Աղաբաբեան, Կատարինէ Ոսկանեան, Մարիամ Ոսկանեան, Մարիամ Յովսէփեան, Սօֆիա Ցարութիւնեան, Հռիփսիմէ Սիմէոնեան, Սառա Մինասեան, Ս. Մ. Բէջանեան, Արուսեակ Ցարութիւնեան, Աշխէն Մարտիրոսեան (ստորագրութիւնները շարունակվում են)։

Բնագրի հետ ճիշդ է՝

Տիգրան Ց. Աճէմեան

ՆՈՒԻՐԱՏԻՈՒԹԻՒՆՆԵՐ

Թիֆլիս, 30 հոկտ.

Կ. Հ. Բ. Ընկ. հիւանդանոցի օգտին ստացվել են նաև հետևեալ նուիրաբերութիւնները. Ա. Ն. Միլեանից 50 հատ տաք վերմակներ, «Blanc et noir» մագազինից 4 շըրջանակ (ցուցակների), Ե. Արամեանից ամսական 10 ռ., Ե. Ե. Աւետիսեանից ամսական 5 ռ., Ս. Աղախանեանից 3 ռ., Վ. Խաչատրեանից 2 ռ., Մ. Ա. Անապէեանից 100 ռ., Ս. Զէրբէկեանից 100 ռ., Բալէ և Ընկերութիւնից մի պուդ սապոն, Յովհ. Ց. Տէր-Ցարութիւնեանից ամսական 10 ռ., Մ. Զ. Բ.-ից 3 ռուբլի։ Խորհուրդ

—

Թիֆլիս, 20 հոկտ.

Էջմիածնեցոց եկեղեցու «Մարիամեան» օրիորդաց դպրոցի հոգաբարձութիւնը յօդուտ դպրոցի՝ Ներսէս ք. Քարտաշեանի միջոցով ստացել է տ. Նատալիա Տէր-Յովհաննէսեանից ի յիշատակ իր հանգուցեալ մօր՝ տ. Սօֆիա Ցարութիւնեանի 100 ռուբլիանոց քաղ. վարկի ընկերութեան մի տոմս, իսկ պ. Մկրտիչ Դարչինեանից ի յիշատակ իր հօրեղբօր կնոջ՝ հանգուցեալ Եղիսաբէթ Դարչինեանի՝ պակի փոխարէն 10 ռուբլի, որի համար հոգաբարձութիւնս յայտնում է իր խորին շնորհակալութիւնը նուիրաբերողներին։

Նախագահ՝ Վ. Ղարիբեան

Խմբագիր-հրատարակիչ՝

Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

Печатать дозволено военной цензурой.

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բժշկ. Բ. Նաւասարդեանի

Հիմնված 1880 թ.

(Կուկիա, Ալօրնցօվի արձանի հանդէպ)

Ամեն օր, բացի կիրակի օրերից

«606»-ի եւ «914»-ի ներսրսկում բժշկական խորհրդակցութեամբ՝ առ. 11—12 ժ.

ԱՌԱՐՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան վեներական (սիֆիլիս) հիւանդութիւն։

Բ. Գ. ԱԼԱՍԱՐԵԱՆ—$9^1/_2$—2 ժ. ներքին, դղային և երեխայոց հիւանդութ. և ծախկոտաց.։

Մ. Մ. ԲԵՆԻԱՄՈՎԻՉ—11—12 ժ. ականջի, կոկորդի, քթի հիւանդութ.։

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏՅԵԱՆ—12—1 ժ. երեչ. հինդ. և շաբաթ. երեխայոց ներքին և հիւ. և ծաղկահատ.։

ԿԻՆ.ԲԺԻՇԿ ՅԷՐ-ԳԻՐԹԵԱՆ—12—1 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.։

ԵՐԵՆՈՆԵՐԸ

Մ. Մ. ԲԵՆԻԱՄՈՎԻՉ—6—7 ժ.

Վճարը 50 կ.։ Հիւանդները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝

Բժշկապետ. Բ. Նաւասարդեան

1. 0—103

Ատամնաբուժարան

Հիմնված ատամնաբոյժ

Բ. ՀԱՅԿԻՆԱՅԻ

Նախաձեռնութեամբ։ Թիֆլիս, Միխայլովսկի պր. № 76

Բուժարանը բաց է հիւանդների համար **օրվայ ու գիշերվայ ամեն ժամին**։ Ատամները բուժելու և պլոմբելու համար վճարը ստացվում է ըստ հատատված սակագնի։

Բուժարանում գործում են 5 բժիշկ-մասնագէտներ, բժ. վիրաբոյժ Բ. Բ. Պիրադովը (որ ժամանակաւորապէս բացակայ է)։

Բուժարանն ունի կատարելագործված լաբորատորիա արհեստական ատամներ պատրաստելու համար։ Կատարվում են **ամեն տեսակ ատամ նա-տեխն**։ **կամեն ուխատանիներ** և շտապ վերանորոգումներ **3 ժամվա ընթացքում**։

(օ. մ.) 755. 100—39

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

„ՄՇԱԿԻ“ ԹՄԲԱԳՐԱՏԱՆԸ

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

հետևեալ գրքերը.

1) «ՄՇԱԿ» ԵՒ ՀԱՅ ԿԻՆԸ գ. 1 ռ.
2) ՀԱՄԱԼԻ ՄԱՍԼԱՀԱԹՆԻՐԸ » — 30 կ.
3) ԿԱՑԵՆԻ ՃԱՆԿԵՐՈՒՄ, դրամ 5 գ. Ա.-ից Առաքելեանի » — 50 կ.
4) ՔԱՌԱՄՆԱՄԵԱԿ «ՄՇԱԿԻ» («Մշակի»-յօրելեանի առիթով «Տարազի» հրատարակած ալմանախ) 1 ռ.
5) ԳՐ. ԱՐԾՐՈՒՆՈՒ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ, հատոր I 1 ռ.

Վերոյիշեալ հրատարակութիւններից մի-մի օրինակ պահանջողները ճանապարհածախս չեն վճարում։

0—4

ԹԻՖԼԻՍԻ Կենտրոնական Գրավաճառանոցում

վաճառվում են հայ գրողների հետևեալ գրուածքները.

Ա. Ատարոնեան. «Անդուռդը» գ. 40 կ.
Ա. Իսահակեան. «Երգեր և վէրքեր» գ. 1 ռ.
Ս. Թորոսեան. «Քաջալերներները» վէպ, ժամանակակից կեանքից գ. 50 կ.
» «Հին տանը» վէպ ժամանակակից կեանքից գ. 35 կ.
«Գարուն» I ալմանախ, գ. 1 ռ.
«Գարուն» II ալմանախ, գ. 1 ռ.
«Գարուն» III ալմանախ, գ. 1 ռ. 50 կ.
Շիրվանզադէ, «Ժողովածու երկերի, հատոր 4-րդ գ. 1 ռ. 50 կ.
Շանթ. «Դերասանուհին» գ. 40 կ.
» «Երազ օրեր» (Գիշերօթիկի մը յուշատետրէն) գ. 40 կ.
Արշ. Շահնազարեան. «Խաւար աշխարհում», պատմուածքներ գ. 1 ռ.
Խ. Տէր-Յովհաննիսեան. «Էֆիմերդէ» գ. 70 կ.

—o—

Նոր դասագրքերից վաճառվում են հետևեալները.

«Մեր Դպրոցը» ռ. տարի գ. 40 կ.
Արտ. Արեղեան. «Աշխարհագրութեան դասագիրք», չորրորդ գիրք, Հայաստան և հարևան երկրամասեր գ. 80 կ.
Ց. Դաղբաշեան. «Սոսոյգ հայոց պատմութիւն» գ. 50 կ.
Գ. Ղազարեան. «Թուրանական խնդիրների նոր ժողովածու» գ. 40 կ.

Դիմել՝ Въ Тифлисъ, Центральная книжная торговля. 977. 1—1

ԸՆԴՈՒՆՈՒՄ ԵՄ Գիշերօթիկ աշակերտներ

և բաց եմ թողնում լաւ մաքուր իւղից պատրաստված տնային կերակուրներ։

Ցերկօվնայա տուպիկ № 4, Վլորենցօվի արձանի մօտ։ (օ. մ.) 961. 5—5

Ծախվում են

1) «ՎԵՆԵՐԱԿԱՆ ՕՐ ԴԱՂՏՆ ՅԱՒԵՐԻ ԲԺՇԿԱՐԱՆ», նկարներով, բազմաթիւ խորհուրդներով և ըէցեպտներով։ Ընտրաբար գիրք և պարզ ու հասկանալի գրված ամեն մի չափահասի համար. բազմաթիւ նախազգուշութեան կանոններ տրիպերով և այլ ցաւերով չը վարակվելու համար։ Գրքի մէջ կայ նաև սուր և խրօնիկական **տրիպերի** և բժշկութեան մասին, ըէցեպտներով։ Գինը 50 կօպ.։

2) «ՓՈՐՁԱՆՔՆԵՐԻ ԱՌՁԵՒՈՒ ԲԺՇԿԱՐԱՆ», ամեն տեսակ պատահական փորձանքներ, հիւանդութիւններ։ Թունաւորութիւններ և նրանց շուտ-մոյթ օգնելը, Բազմաթիւ անային դեղեր և խորհուրդներ։ Ջատ պարզ ու հասկանալի լեզուով։ Ամեն մարդու անհրաժեշտ գիրք դրպանի համար, և ամէ՛ մարդ կարող է մեծ օգնութիւն հասցնել թէ իրա և թէ ուրիշներին։ Գինը 30 կօպ.։

3) «ԵՐԻԵԱՎԻ ՏԿԱՅՈՐ» ամենալաւ և ծիծաղաշարժ ադեկդոտների ու սրախօսութիւնների ժողովածու։ Ծիծաղաշարժ տիպերի պատկերը գրքի երեսին։ Գինը 20 կ.։

Այս երեք գիրքը միասին պահանջողներին

ՁՐԻ ՈՒՂԱՐԿՈՒՄ ԵՄ ԻՐԵՐ ՆՈՒԻՐ

երեք հետևեալ գրքերը. 1) «Ինկարմատի շալվարը» ծիծաղաշարժ վոդեվիլ շափահասների համար (գինն է 20 կ.), 2) «Բաֆֆի» պատկերով (գ. 10 կ.), 3) «Միհնոյն դագաղում», պատմուածք հայ-թուրքական կռիւներից, դիակների նկարներով, գինն է 7.։

Գրքերի գինը և ճանապարհի ծախս 20 կօպ. անպայման առաջուց ղրկել մարկաներով։ Հասցէն՝ Тифлисъ. Семеновская ул. № 9. Медицинскому фельдшеру А. Г. Есаянцу.

(հ. կ.) 327. 100—46

ԱՃՈՒՐԴ

Թիֆլիսի Քաղաքային Ուղղաւոր յայտարարում է, որ շաբաթ, նոյեմբերի 8-ին 1914 թ. Ուղղաւորի դիվանում տեղի կունենայ աճուրդ Վերայի կամուրջի վրայով երթևեկողներից առնվող տուրքը կապալով տալու մասին։ Պայմանները և բոլոր տեղեկութիւնները կարելի է տեսնել պարապմունքների ժամերին՝ Ուղղաւորի 4-րդ բաժանմունքի դիւանատանը։ 967. 1—1

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ

ԻՆԺԵՆԵՐ

Տ.Ա. ԲՈՒԴԱՂԵԱՆԻ

Բաղու, Կրասնօվոդսկայա փ. տ. Ասան-Ռազբաշեանցի։ Հեռախօս № Ա 23-49, 23-50

Առաջարկում է ամբողջ Կովկասի և Պարսկաստանի համար իսկապէս Դիզել շարժիչներ (մոտորներ) յայտնի ԿՕԼՕՄԵՆՍԿԻ ընկ. մեքենայագործարանից։

Հօրիզոնական անգլիական շարժիչներ, (մոտորներ) «ԿՐՕՍՍԼԷԿ» ընկերութեան մեքենայագործարանից «Դիւրացրած Դիզել» սիստեմի, որ գործ է ածվում նաֆթի բոլոր տեսակներով. նաֆթի ծախսն է մի ժամում ամեն մի այժին $^1/_2$ ֆունտ կամ 200 գրամմ։

Գազային շարժիչներ, որոնք բանում են թէ բնական և թէ գեներատորային գազով։

Ջրհան և ջրմուղ մեքենաներ (նասոսներ)։

Ջրի շարժիչներ (տուրբինաներ)։

Սառոյց պատրաստող մեքենաներ «Ֆէնիկս» ընկ. գործարանից։

Ամեն տեսակ էլեքտրական մեքենաներ և պիտոյքներ յայտնի «Դինամո» ընկ. գործարանից։

Երկրագործական մեքենաներ՝ լոկոմոբիլներ, ցորեն մաքրող մեքենաներ, արաքօրներ և այլն՝ յայտնի ամենայն ամերիկական «ԿԷՅՍ» (Case) ընկեր. գործարանից։

Մեծ ճանապարհի վրա աշխատելու համար ԱԻՏՕՄՕԲԻԼՆԵՐ նոյն ամերիկական «ԿԷՅՍ» (Case) ընկերութեան գործարանից։

Վերոյիշեալ տեխնիքական գրասենեակը իր վրա է վերցնում զանազան գործարաններ սարքել և գործի գցել իր միջոցներով՝ ինժեներներով և վարպետներով։

Դիմել՝ Баку, Техническая Контора Т. А. БУДАГЯНЦЪ.

Արտասահմանից՝ Bacou (Russie) Bureau Technique T. A. Boudaguian, Ingénieur.

(հ.կ.) 551. 0—44

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

Մ. ԶՄՇԿԵԱՆԻ

1915 թ.

„ԾՈՅԻ ՕՐԱՑՈՅՑԸ“

ՍԱՍՈՒՆԻ ՀԵՐՈՍԱՊԵՏ

Ալեքսանդրապոլի

պատկերով։

Ցանկացողները թող շտապեն, որպէսզի հերթին՝ ժամանակին կարողանան ստանալ։ Հասցէն՝ Թիֆլիս, Մակար Զմշկեան։

(հ.կ.) 966. 10—2

Լոյս տեսաւ

ՍԱԼՄԱՆ

ՌՈՒՍ-ՏԱՃԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

և նրա

ՀԱՅՏԱԶԳԻ ՀԵՐՈՍՆԵՐԸ

Ա.

ԳԵՆԵՐԱԼ-ԱԴԻՏԱՆՏ

ԼՕՐԻՍ-ՄԵԼԻՔՕՎ

(Իր լուսանկարով և պատերազմական բեմի սխեմատիկ քարտէզով)։

—

Գինն է 30 կօպէկ։

Ծախվում է Թիֆլիսի բոլոր գրավաճառանոցներում։ Պահեստը հեղինակի մօտ։

Հասցէն՝ Тифлисъ, Бебутовская 6. Ашоту Атанасьяну. Ուղարկվում է վերադիր վճարով. 20-ից աւելի՝ 20% զեղչ։

(կ. ե. հ.) 6—4

ՏՐՎՈՒՄ ԵՆ ՎԱՐՁՈՎ

ՍՕԼՕԼԱԿՈՒՄ

Լերմօնտովսկայա փող. № 12 (бель-этажъ)

ՓԱՐԹԱՄ ԲՆԱԿԱՐԱՆ

բաղկացած 8 սենեակից, բոլոր յարմարութիւններով, ծառայի մենեակով և էլեքտրական լուս. վերաբերեալ անցկացրած թելերով։ Բնակարանը տեսնել կարելի է օրվայ ամեն մի ժամին։ Տեղեկանալ վերևի յարկում, քաշելով դռան ս.ջ զանգը։

(կ.) 965. 2—2

Գիւղատնտեսական Բիւրո

Գիւղատնտեսութեանը եւ կօօպերացիային վերաբերող խորհուրդներով իրան դիմողներին

ԳԻՒՂԱՏՆՏԵՍ

Ա. ԱԹԱՆԱՍԵԱՆ

Ընդունում է ամեն օր (բացի շաբաթ և կիրակի օրերից) առաւօտ. ժ. $8^1/_2$-ից մինչև $10^1/_2$-ը, երեկ. ժ. $5^1/_2$-ից մինչև $7^1/_2$-ը։ Թիֆլիսից դուրս եղած գրաւոր դիմումներին պատասխանվում է անմիջապէս. պատասխանի համար պէտք է ուղարկել 2 հատ 10 կօպէկանոց պօստային մարկաներ։

Հասցէն՝ Թիֆլիս, Бебутовская № 6.

(ե. հ. կ.) 921. 0—12